Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

№ 13324

ՇԱՆԹ

ԵՍԻ ՄԱՐԴԸ

ԴՐԱՄԱ ՀԻՆԳ ԱՐԱՐՈՎ

ՀԱՆԻԱԾ „ԲԱՆԲԵՐ“-ԻՑ

88

ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ
Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ 1904

4308-Մ

891.99 Զ-ունդ
Շ-30 Խմբ
Մատյան

ստաց	31/IV	28/VIII	59

ПК з. 392. т. 3.000 000

891.99
Շ-30

-8 NOV 2011

ԵՍ ՄԱՐԴԸ

ԴՐԱՄԱ ՀԻՆԳ ԱՐԱՐՈՎ

1001/3031

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публичная Библиотека
7/XI—1922
имени А. Мравяна
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2651

13 ՄԱՅ. 2013

773

Ա Ն Զ Ե Ր

ՄՈՒՇԵՂ ՏԷՐԵԱՆ. 35-ը անց, խոշոր, թիկնեղ, թուխ. կլոր մօրուք հատու խօսուածք. ծանր շարժումներ։

ՈՐԲԵԻԱՑՐԻՆ՝ քոյրը. 40-ի մօտ, դէր, կարճ. հիւանդոտ։

ԱՐԱՔՍԻ՝ վերջինիս աղջիկը. 19-ի շուրջը. փոքրահասակ. առատ սև մազերով. աշխուժ ու ճկուն։

ԱԲՐԱՀԱՄ՝ Տէրեաններուն ազգական. կէս-ծեր. ծոյլ ու դանդաղ։

ԿԻՆԸ՝ Աբրահամի. ցամքած ու թափթփած, բայց երիտասարդ դեռ։

ՍՐԲՈՒՀԻ՝ ասոնց աղջիկը։

ԱՐՄԵՆԱԿ. հասուն երիտասարդ մը, բութ դէմքով. սափրած. երկար ու չոր։

ՍԵԴՐԱԿ ՄԻՆԱՍԵԱՆ. 25-ի մօտ. դէմքը բարի, ինքը նրբակազմ։

ԱԶՆԻՒ՝ քոյրը. եղբօրմէն երեք-չորս տարու մեծ. նիհար. երագկոտ աչքեր. մութ գոյնի հագուստ։

ՄԱՑՐԸ՝ այս երկուքի. ժիր պառաւ մը։

ՍՄԲԱՏ. կարճ ու կլոր. մօրուքի մէջ կորած արտայայտիչ դէմք։

ՇԱՀԱՆԵԱՆ. խելացի հայեացքով, սեւուլիկ թարմ երիտասարդ մը. կարծես միշտ բարկացած։

ԾԱՌԱ ՄԸ։

Անցքի տեղը Պոլիս։

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅՍՏ-ԱԴՍ.ՍՍՀ
Ա. Մասիսյան անվ. ԼՄՍՀ

4308-72

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐ

Պարզ սենեակ մը. կահերը համեստ ու կոկ. պատուհանին մօտիկ գրասեղան։ Առտու։

Ա. ՏԵՍԱՐԱՆ

Սեղրակ զբաղուած է գրասեղանին առջև։ Քիչ մը լուռ։ Դուրսէն կը լսի անորոշ խօսակցութիւն մը, որ կը մօտենայ։ [1])

ՍՄԲ. Մանելով՝ Հը՞ը. բարի լոյս։

ՍԵԴ. Խե՞ր է. առտուն կանուխ։

ՍՄԲ. Խե՛ր։ Անգամ մը դէպի գուռը նայելէն ետքը՝ ծոցէն կը հանէ նամակ մը ու կը դնէ տղուն առջև։

ՍԵԴ. Ի՞նչ բան է սա բանալով չփակուցած ծրարը։

ՍՄԲ. Վճի՛ռք։

ՍԵԴ. Վճի՞ռք։ Արդէն պատրաստե՞ր ես. գիշերը քունդ չտարաւ, երևի։

ՍՄԲ. Կը կնքես ու կը յանձնես։

ՍԵԴ. Իսկոյն։ Արդէն Շահանը այսօր հոս է գալու։

ՍՄԲ. Միայն կը կրկնես, որ զգուշ։ Աւելորդ զոհեր չտանք։

ՍԵԴ. Շահանը ճարպիկ տղա է, իր գործը գիտէ։ Նամակը արագ աչքէ անցընելէն վերջը կը թաղի մտածման մէջ։

ՍՄԲ. Եւ մանաւանդ տաղտաժ. ընդհատում։ Այսպէս ուրեմն. շուտով հաշիւնիս կը մաքրուի, պարո՛ն Մուշեղ։

ՍԵԴ. Նամակը ծրարին մէջ դնելով՝ Եա՜, Մուշե՛ղ. սա ալ գնաց։ Գիտե՞ս, տարօրինակ բան է. երէկ գիշեր ժողովին մէջ խնդիրը ինծի համար շատ էր պարզ. մատնիչ մը կար մէջտեղը, ան ալ իր երբեմնի ընկերները մատնող մը, դաւաճան մը. ուրեմն վերջացաւ. մահ. ու ծայնս տուի։

[1]) Հեղինակի ուղղագրութիւնը թողնում ենք անփոփոխ։ Տես այս առթիւ «Ուղղագրական խնդիրներ» յօդուածը այս հատորում։ ԽՄԲ.

ՍՄԲ. Չէ մի արևշատութիւն մաղթէինք պիտի, որ ոստիկանապետի քիթը մտած ինչեր ըսես ընէ։

ՍԵԴ. Դէ՞, իհարկէ. բայց գիտե՞ս, հիմա, երբ պարտականութեան պաշտօնական վերարկուն ուսերուս չկա, երբ մարդն է, որ մէջս կ'ըզգա ու կը խօսի, երբ... շատ տարօրինակ է, ճշմարիտ։ Ամբողջ գիշերը երկար երկար մտածեր եմ։

ՍՄԲ. գիրք մը թղթատելով՝ անփոյթ։ Նոր ծխել սկսողի առաջին սիրտ խառնրուքը. կը սորվիս՝ կ'անցնի։

ՍԵԴ. Չէ, բայց ժամանակին մեր ընտանիքները բաւական մօտ են եղած իրարու. այսպէս եօթը ութը տարի մը կա. այն ատեն Իւսկիւտար կը բնակէինք։

ՍՄԲ. անտարբեր։ Հա՜։

ՍԵԴ. Անոնց ու մեր տունը, այսպէս, կից էր իրարու։ Վերջը ելաւ դաւառ գնաց. կ'ըսէին Թունդ աղջասէր է. ես ալ դեռ բոլորովին թարմ, հազիւ տասնրուք տարեկան տղա մը... կը կարէ խօսքը, պահ մը կը մտածէ ու յանկարծ կը ժպտի՝ դառնութեամբ գլուխը ցընցելով։

Եթէ վէպի մէջ ըլլար՝ շինծու է պիտի ըսէի։

ՍՄԲ. միշտ իր գրքին հետ. կէս բերան։ Ա՜ հ՞ինչը։

ՍԵԴ. Չէ՞ որ իմ առաջին, պատանեկան սէրս անոր քրոջ աղջիկն է եղած. մտածկոտ։ Եւ հիմա, երբ կը մտածեմ, որ պիտի երթար ու գար, ու այդ մարդու մահուան գործը՝ նամակը վերցնելով, իմ ձեռքերէս պիտի անցնէր։ Տարօրինակ զգացում է, ճշմարիտ։

ՍՄԲ. գիրքը փակելով։ Դէ՞, հերիք է, առաւանց կանուխ։ Հոս տարօրինակ ոչինչ չկա. ասոր կ'ըսեն կեանք։ Բարեկամ, հին, նոր, ընկեր, ոչի՛նչ չի հարցրներ. կեանքը չի հարցրներ, մենք ալ հարցրնելու իրաւունք չունինք։

ՍԵԴ. Բայց մէջերնիս սիրտ կա վերջապէս։ Կարելի՞ է չի մտածել։

ՍՄԲ. Այս տեսակ գործերու մէջ ոչ սիրտն է բանի պէտք, ոչ ալ այդ քու հին դարմանը հովին տալը։ Կը վարժուի՛ս։ Դէ՞, ց՛ը։

ՍԵԴ. Աղէկ. ուր այդպէս շտապ։

ՍՄԲ. Փոստը գործ ունիմ։ Դուրս։

*

Սեդրակ կը կենա, կը վերցընէ ծանր շարժումով մը նամակը, կը բռնէ ձեռքը ու կը մնա անշարժ մտածման մէջ։ Կողմնակի դուռնէն կը մտնէ Աշնիւ ու պահ մը դիտելէն վերջը։

ԱԶՆ. Սմբատը գնա՞ց։

ՍԵԴ. Ինչպէ՞ս...

ԱԶՆ. Ձեռքի՞նդ ինչ բան է։

ՍԵԴ. անհանգիստ, պահել չանալով։ Ձեռքի՞ս, ոչինչ։ Չե՞ս տեսներ. նամակ։

ԱԶՆ. Դա ի՞նչ տեսակ նամակ է, որ վրան այդպէս կը դողաս։ Ի՞նչ կա մէջը։

ՍԵԴ. Մէ՞ջը... մէջը՝ ոչի՛նչ։ Ոչինչ, ինչպէս կեանքի մէջ ամէն բան, ինչպէս կեանքը ինքը։ Եւ թէև ատիկա ամենքս գիտենք, բայց չէ՞ որ կեանքի վրա ալ կը դողանք։

ԱԶՆ. Այդ նամակին մէջ բան մը կա, Սեդրակ։

ՍԵԴ. Կեանք մը կա մէջը, կ'ըսեմ քեզի. չե՞ս հաւատար. կեանք մը, ոչնչութի՛ւն մը։ Մէջը... արհամարանքով նամակը կը նետէ դրասեղանին աչքը ու կը կղպէ—մէ՛ջը, սիրելի՛ս, երես մը թուղթ կա ու երկու կաթիլ չորցած թանաք. ահա՜ ճշմարտութիւնը, որ քեզի համար չափազանց հետաքրքիր էր, չէ՞։

ԱԶՆ. քիչ մը լուռ ու տխուր դիտելէն ետքը։ Սեդրակ, ալ չե՛մ կրնար համբերեր, քու արհամարանքդ ինծի կ'ըսպաննէ. ալ մինչև հոս, կոկորդս է հասեր։

ՍԵԴ. ապշած։ Ի՞նչ։

ԱԶՆ. Կարելի է, իրաւ, ես քեզի չեմ կրնար հասկրնար. դուն ուսումնական տղա. չգիտեմ... դառն—միայն ծանր է, շատ ծանր, Սեդրակ։ Գիտե՞ս, որ իմ միակ ուրախութիւնս դուն ես, իմ միակ ոգևորութիւնս։ Ես ի՞նչ ունեմ քեզմէ զատ՝ աշխարհիս երեսին։

ՍԵԴ. կը բռնէ ձեռքը, կը նստեցընէ մեղմութեամբ. ու ինքն ալ մօտը նստելով՝ առանց ձեռքը թողնելու։ Ես քեզի ի՞նչ եմ ըրեր, հոգի՛ս։

ԱԶՆ. Է՞, քեզի համար ես եղած չեղած, բնաւ. կարևորութիւն չես իտար. բոլորովին աւելորդ մէկը, կարծես, օտա՞ր մը։

ՍԵԴ, Օտա՞ր. դո՞ւն. ինծի՞ համար։

ԱԶՆ. Է՞. հապա ի՞նչ։

ՍԵԴ. մտածկոտ։ Շիտակ է, կան բաներ, որոնց մասին քեզի հետ խօսելէ խոյս եմ տուեր. բայց ի՞նչ արհամարանք, ի՞նչ բան. երեխա՞ ես։

ԱԶՆ. Հապա ինչո՞ւ ուրեմն։

ՍԵԴ. Այնպէս... ծամ՛ծմելով—գործի խնդիրներ. ամէն բան ըսելը անյարմար է և արժէ՞. ինչո՞ւ իզուր անհանգստութիւն պատճառեմ քեզի։

ԱԶՆ. Անհանգստութի՞ւն. գիտէի որ ատ պիտի ըսես։ Իսկ այսպէս շատ աղէկ է, հա՜, երբ հաստատ ոչինչ չգիտեմ. ու ի՞նչ խենթ բաներ ըսես՝ կ'անցնին մաքէս։

ՍԵԴ. Ի՞նչ բաներ, օրինակի համար։

ԱԶՆ. Է՞, ինծի աչքերս բաց կոյրի տեղ մի՛ դներ։ Ի՞նչ գործ ունիս դուն շարունակ այդ Սմբատին հետ. անվերջ, անվերջ լեզի կու տաք.

անկէ եաքը այդ Մելքոնը, այն միւս սև սև աղան, կու գան կ'ԵրԹան սուսիկ փուսիկ. ատ ի՞նչ նամակներ են վերջապէս, շարունակ կ'ըստանաս ու կը գրես։

ՍԵԴ. Խնդալով Ուրիշ խօսքով՝ վրաս կարդին ոստիկանական հրսկողութիւն կա։

Ա.ԶՆ. Զգիտե՛մ. ես անգամ մը վարժուեր եմ քու վրադ իբրև պզտիկ եղբօրս վրա նայելու, հոգ ընելու, մտածելու։ Ի՞նչ ընեմ, ես ուրիշ կերպ չեմ կրնար։

ՍԵԴ. Հա՛, քուրի՛կս, իհարկէ։ Միայն իզուր բաներու վրա սիրտ մի՛ հատցրներ։

Ա.ԶՆ. Է՜, վե՞ր։ Դիտե՞ս, որ քու բրածդ կրակի հետ խաղալ ըսել է։

ՍԵԴ. Ճի՛շտ է, շատ դաւրճալի չէ խաղացած դերերնիս. բայց ի՞նչ ընես. ամէն ժողովուրդի վիճակուած չէ անդորը ու բաղդաւոր դերեր խաղալը. վատնդաւորներ ալ կան։ Պատմութեան մեղի բերած ու տուած դերը ասիկա է, ի՞նչ կրնանք ըներ։ Եւ վերջապէս, սիրելի՛ս, կեանքի հետ խաղալն ալ իր հաճոյքը ունի։ Մեռնիլը մեռնիլ է, այս ծեւով Թէ այն, նոյն չէ՞. քիչ մը փիլիսոփայօրէն պէտք է նայիլ գործին կը խնդա։

Ա.ԶՆ. Ա՜խ, Սեդրակ, մի՞Թէ ուրիշ ճամբա չկա։

ՍԵԴ. Քա՛ջ եղիր, դատարկ բան է։ Ամէն բան...

Ա.ԶՆ. Սո՛ւս, մայրի՛կը։

*

ՄԱՅՐ. դուրսի հագուստով, ճակտի դռնէն։ Ողորմի-Աստուած մեղի, հեԹանոսներ։

Ա.ԶՆ. Ողորմի Աստուած, մայրի՛կ։

ՍԵԴ. Աղէկ. կիրակին ըսենք՝ կիրակի է. այսպէս լուր օրով ի՞նչ գործ ունիս եկեղեցին։

ՄԱՅՐ. Սո՛ւս, տղա. դո՞ւն ինչ գիտես։ Սուրբ Գէորգին այսօր երկու մոմ վառեցի։ Բաղդ բաց է. սո՛ւս եղիր, սո՛ւս։

ՍԵԴ. Ի՞մ բաղդս։

ՄԱՅՐ. ԵԹէ գիտնաս այս գիշեր ի՞նչ երազ եմ տեսեր վրադ։ Սուրբ Գէո՞րգ Թող յաջողէ, սուրբ ծիաւո՞ր, զօրաւո՞ր...

ՍԵԴ. Ինչ և է. նորէն աղէկ որ սուրբ Գէորգին ես գացեր. բոլոր մնացած լալկան ու բաղմաչարչար սուրբերուն մէջ ատիկա գոնէ մէկ հատիկ էրիկ-մարդն է. մարդու շնորհք կա վրան. տակը ձի, ձեռքը զէնք։

ՄԱՅՐ. Մեղա՜, մեղա՜, ինչե՞ր կը խօսի։

ՍԵԴ. Հապա՛, հապա։ Գլխարկը վերցընելով. ԵԹէ Շահանը գալու ըլլա՝ կ'ըսէք որ սպասէ։ Ես իսկոյն կը վերադառնամ։

Ա.ԶՆ. Սա սեւուլի՞կը։

ՍԵԴ. Հա՛։ Դուրս։

*

ՄԱՅՐ. ետեւէն կարօտով կը նայի։ Շէնքդ շնորհքդ սիրեմ, զաւակս։ Դուն անոր բաներուն շատ ականջ մի դներ. անոր սիրտը ոսկի է։ Երէկ գիշեր, գիտե՞ս, ինչ տեսնամ երազս, Աղնի՛ւ... և ինչպէս ալ ելաւ. անմիջապէս. մեռնիմ սուրբ զօրութեանդ. դեռ եկեղեցիէն ոտքս դուրս չէի դրեր, որ հանդիպեցա Օհաննէս էֆէնդիին. շիփշիտակ խօսք բացի. դացի վրան Թէ տղաս եկեր է Եւրոպայէն, Թէ դուն պէտք է անիկա քու քովդ առնես, շնորհքով գործ մը տաս։ Մարդը քիչիկ մը մրտմտաց. բաւ՝ հոգդ մ'ըներ, բան մը կ'ընենք. Սեդրակը, բաւ, աչքը բաց տղա է։ Դիտե՞ս, Օհաննէս էֆէնդիին գործերը, կ'ըսեն, հիմա շատ աղէկ են։

Ա.ԶՆ. Գլուխը օրելով Է՜, մայր, ԵԹէ դեռ քիչ մրն ալ Եւրոպա մնար, գէշ չէր ըլլար։

ՄԱՅՐ. Ամա՜ն, աղջի՛կ. քանի՞ փարա կու տամ անոր Եւրոպային. սորվածն ալ ի՞նչ էր որ. պատմութիւն-մատմութիւն, խենԹ բաներ։ Սա՜նկ, շնորհքին գործի մը մտնէ հիմա, ու շուտով ալ առաջ անցնի։ Խաչը իմս է, զօրութիւնը ես գիտեմ։

Ա.ԶՆ. Հառաչանքի ձեւով։ Հապա, գիտե՞ս... ի հարկէ։

ՄԱՅՐ. որ պատուհանին էր մօտեցած՝ դուրս նայելով։ Քա՛, մեղի կու դա, Աղնի՛ւ. իրա՛ւ որ մեղի կու դա։

Ա.ԶՆ. անտարբեր։ Ո՞վ է որ։

ՄԱՅՐ. Մուշեղը. սա՛ որ կ'ըսեն Թէ մատնութիւններ կ'ընէ։

Ա.ԶՆ. յանկարծ վեր ցատկելով աթոռէն, սաստիկ յուզած։ Ո՞վ... զանդը կը հնչէ։

ՄԱՅՐ. Քա՛, իսկոյն ճանչցա. հիչ չէ փոխուեր. դնա՛, դնա՛, դուռը բաց. ի՞նչ է տեսեր, որ ելեր եկեր է։ Դէ՜, դնա՛։

Ա.ԶՆ. ցրիւ, շփոթ։ Ո՛չ, ո՛չ, ես... ես չեմ երթար. ինքդ դնա՛. կեցի՛ր. ըսէ՛... ըսէ՛ տունը մարդ չկա։

ՄԱՅՐ. Խելո՞ւ ես, ի՞նչ ես. ատ տեսակ մարդոց քէֆին դիպչելը աղէկ չէ. դնա՛, դնա՛ բաց։ Զանգ։

Ա.ԶՆ. Ո՛չ. ես չեմ երթար։

ՄԱՅՐ. Քա՛, փախուկ է։ Վրան շտկելով՝ մէջի դռնէն արագ դուրս։

Ա.ԶՆԻՒ. զզուշ կը մօտենա պատուհանին, վարագոյրի ետեւէն կը նայի ցած. ու յանկարծ կը ձգէ ու կը փախչի կողմնակի դռնէն դուրս։

ՄԱՅՐ. Ճակտի դռան մէջ՝ խնդալով։ Հոս հրամեցէք, այս կողմ։ Ասղիի սենեակները աւելի զով ըլլալուն, մենք այս կողմը կը նստինք միշտ։ Կը ներէ՛ք, քիչ մը տակն ու վրա է, բայց...

ՄՈՒՇ. Խնդրեմ, խնդրեմ։ Ուրեմն ինծի ճանչցա՞ք, հա՞։

ՄԱՅՐ. Հապա՛. տեսածիս պէս։ Նստեցէ՛ք։ Հասուն մարդիկը քիչ կը փոխուին։

ՄՈՒՇ. Այո՛։ Իսկ պարոն Սեդրակը տունը չէ՞։

ՄԱՅՐ. Ո՛չ. դուրս ելաւ։

ՄՈՒՇ. Մե՞ղք. հեռը քիչ մը խօսելիք ունէի։

ՄԱՅՐ. Կարծեմ շուտով դա պիտի։

ՄՈՒՇ. Իսկ ի՞նչպէս է օրիորդը. ա՞ն ալ մինթէ հոս չէ։

ՄԱՅՐ. Ա՛ն... հոս է ան. երևի վերը. կ'երթա դէպի կողմնակի դուռը ու բարձը կը կանչէ. Աղնի՛ւ, Աղնի՛ւ, փոր եկուր, շո՛ւտ, նայէ՛ ով է եկեր։

ՄՈՒՇ. Բայց խնդրեմ անհանդիստ չընէիք։

ՄԱՅՐ. Ա՜խ, ի՜նչ անհանդստութեան բան կա։ Իսկ Սեդրակիս հետ ի՞նչ բան է ձեր խօսելիքը։

ՄՈՒՇ. Ոչինչ. այնպէս փոքրիկ տեղեկութիւն մը. ընդհատելով։ Իսկ դո՞ւք ինչպէս էք. ձեզի հանդիպիլը այնպէս դժուար է հիմա։

ՄԱՅՐ. Այո՛. այսպէս բոլորովին կարբուեցանք իրարմէ. աս ծով քաղքին մէկ ծայրը մենք ինկանք, մէկալ ծայրն ալ դուք։

*

ԱԶՆ. գոգնոցը հանած է. դունատ. դէպի տղան յառաջանալով լուրջ ու կարճ։ Բարի՛ էք եկեր։

ՄՈՒՇ. որ աղջիկը նշմարելուն պէս ոտքի էր ելած, բաւական ու շնչա դիտելէն վերջը։ Բայց ի՞նչպէս փոխուեր էք, օրիորդ։

ԱԶՆ. Աբդէն ժամանակ է...

ՄՈՒՇ. Ո՛չ. ես ատիկա ըսել չեմ ուզեր։ Դեռ կեանքը ձեր առաջն է։

ԱԶՆ. Հեգնոտ ժպիտ։ Կը կարծէ՞ք։

ՄՈՒՇ. Անշո՛ւշտ. ջերմ ու կը ցանկամ բոլոր սրտով։

ԱԶՆ. Հայեացքը վար։ Շնորհակա՛լ եմ։

ՄՈՒՇ. տեսակ մը հրամայական։ Եղէ՛ք բաղդաւո՛ր։

ՄԱՅՐ. Բայց նստեցէ՛ք, ոտքի վրա մնացիք։ Իսկ նորէն դուրսերը գնալու միտք չունի՞ք։

ՄՈՒՇ. Ո՛չ։

ՄԱՅՐ. Զհաւնեցաք, երևի, դաւառի կեանքին։

ՄՈՒՇ. տհաճ։ Ի՞նչ կա հաւնելու կամ չհաւնելու. կեանքը ամեն տեղ ալ նոյն տափակ կեանքն է. ամե՛ն տեղ ալ նոյն իրարու ձեռքէ խլելու կռիւը ու նոյն յաւիտենական անօթինե՛ը։

ՄԱՅՐ. Իրա՛ւ է, իրա՛ւ. հիմա ապրուստը շատ է սուղցեր. ուտելիքը՝ կրակի գին. աղքատները որ ըսես...

*

Սեդրակ կը մտնէ ճակտի դռնէն ու զարմանքի, վախի յանկարծ շարժումով մը կանգ կ'առնէ պահ մը։ Կը նայի իր զրասեղանին. ու աւելի հանդարտ ու հարցական կը դառնա Մուշեղին։

ՄՈՒՇ. ոտքի։ Անշուշտ ինծի չէիք սպասեր։

ՍԵԴ. յուզած ու զուսպ։ Անկեղծ խօսելով... ո՛չ։

ՄՈՒՇ. Կը տեսնէ՞ք. իսկ ես ձեզի յիշեցի. հի՛ն բարեկամները։ Մինթէ ա՞յդ ասոիճան զարմացաք։

ՍԵԴ. կարուկ։ Ինչո՞վ կրնամ ձեզի ծառայեր։

ՄՈՒՇ. ժպտուն։ Ինծի՞. ոչնչով։ Կը ցանկայի միայն ձեզի հետ քանի մը խօսք։

ՍԵԴ. Խնդրեմ, մայրի՛կ, քիչ մը առանձին թողէ՛ք մեզի։

Մայր ու աղջիկ դուրս։

*

ՍԵԴ. երբ դուռը կը գոցի։ Խնդրեմ։

ՄՈՒՇ. Այդպէս կրշտապէ՞ք։ Ըսենք, իհարկէ, կան մարդիկ, որոնց հետ երկար խօսիլն անգամ յանցանք է. այնպէս չէ՞։

ՍԵԴ. քաղաքավարի։ Ներեցէք։ Ես հետաքրքիր եմ միայն ձեր ըսելիքը շուտով դիտնալու։

ՄՈՒՇ. Լա՛ւ։ Իմ ըսելիքս... բայց նախ հարց մը. իհարկէ կը պատասխանէք, եթէ կամենաք։

ՍԵԴ. Անշուշտ, ինչպէս ամեն հարցի։

ՄՈՒՇ. Ձեր արդի այս Պոլիս գալը պատահակա՞ն է, թէ՞ որևէ որոշ նպատակ մը ունի։ Կարծեմ մայիսի մէջ քիչ մը կանուխ է ամառնային արձակուրդ ըսելու համար։

ՍԵԴ. նախ աչքերը կծկած անոր կը յառի շեշտ. և վերջը հանդիստ ու վճռական։ Այո՛, որոշ նպատակ մը ունի։

ՄՈՒՇ. ժպտուն։ Որը, անշուշտ, ինծի չէք կրնար յայտներ։

ՍԵԴ. Ընդհակառակը։ Մանաւանդ որ ինչպէս ձեր հարցրնելու ձևէն կը դուշակեմ, ձեզի համար գաղտնիք մը չէ արդէն։ Ըսենք՝ ձեր են-

թաղրութիւնը ընելու համար մասնաւոր դժուարութիւն մը չունէիք։ Դեռ շատ ժամանակ չէ անցեր այն օրէն, երբ ինքներդ ալ նոյն ճամբուն վրա էիք։

ՄՈՒՇ. Ձայնը ձիգ տալով ու ժպտուն։ Այո՜... բայց ժամանակ արդէն անցեր է բաւականին. ինչ և է։ Շնորհակալ եմ ձեր անկեղծութենէն։ Եւ որպէս զի չի մտածէք, թէ պարապ հետաքրքրութիւնն է ինձի հոս բերողը. ծոցի գրպանի թղթերուն մէջէն ծալլած թուղթ մը հանելով՝ կը մեկնէ անոր, ընդունեցէք, խնդրեմ։

ՍԵԴ. առանց առնելու։ Ի՞նչ բան է։

ՄՈՒՇ. Դիպլոմը այնպէս բերաւ, որ ոսպիկանապետին մօտ քանի մը նամակներ ինկան ձեռքս ու այս նամակին մէջ ձեր անունը հանդիպեցաւ աչքիս բաւական վատանգաւոր նախադասութիւններու քով։ Ահա, թուղթը քարացած Սեղրակի ձեռքը կոխելով։ Դուք դեռ ճահիլ էք, և իհարկէ լսել անգամ չէք ուզեր, եթէ ըսեմ, որ բոլորովին իզուր տեղը ձեզի փորձանքի մէջ չի ձգէք. բայց գոնէ գրեցէք ձեր ընկերներուն, որ քիչ մը աւելի զգուշ ըլլան. մէկ ալ շատ մի՛ վստահիք Սիրաք Մելքոնեան անունով անձին։

ՍԵԴ. ապշած։ Մելքոնեա՞ն...

ՄՈՒՇ. Նամակը չի մոռնաք պատռելու. ու այս բոլորը, իհարկէ, միայն մե՛ր մէջ։ Դէ՜, ուրեմն մնա՛ք բարով։ Դուրս։

*

Դ. ՏԵՍԱՐԱՆ

Սեղրակ երկու քայլ առաջ կը վազէ՝ կանչելու, բռնելու շարժումով, բայց դռան մօտ կանգ կ՚առնէ։ Ծանր-ծանր կը բարձրացընէ ու կը կարդա թուղթը։ Վերջը կը ծալէ ու կը դնէ գրպանը՝ ունքերը կիտած, դէմքը խոժոռ։

Ա.ԶՆ. Ներս վազելով՝ շտապ։ Ի՞նչ կ՚ըսէ, Սեղրակ։ Ըսածն ի՞նչ էր։

ՍԵԴ. Ոչի՛նչ։

Ա.ԶՆ. Ձեռքերը կը ծալլէ կուրծքին ու ոտքը գետին տոփելով՝ կրքոտ, պահանջոտ։ Սեղրակ, ըսե՛ս պիտի ինձի՝ ի՞նչ ըսաւ քեզի այդ մարդը։

ՍԵԴ. Ըսածը... չգիտեմ. գիտեմ միայն, որ ինձի անմիջական կալանաւորումէ ազատեց։

Ա.ԶՆ. սարսափած։ Ի՞նչ։

ՍԵԴ. Ապուշնե՛ր, ապուշնե՛ր. դեռ մինչև հիմա ամենատարրական բաները չի կրցան սորվին. անուններ գրել, այսպէս ամրոզչ, ան ալ այս տեսակ նամակի մը մէջ, ուր երկու տող վերը...։ Զէ, չեն խրատ-

ւիր, պարապ բան է։ Եւ ահա՜ նամակը ինկեր է նորէն ոստիկանութեան ձեռքը։

Ա.ԶՆ. Է՜, եաքը՞։

ՍԵԴ. Ալ ի՞նչ եաքը. այդ մարդը վերուցեր է գաղտուկ ու առեր է ինձի բերեր։

Ա.ԶՆ. ուրախութեան բուռն թափով մը։ Տեսա՞ք, տեսա՞ք հիմա։ Ես գիտէի՛, ես հաստատ գիտէի, որ անիկա այնպէս զէշ մարդ չէր կրնար ըլլար. այնպէս... այնպէս, ինչպէս որ կ՚ըսեն։ Բայց Աստուած իմ, այս ի՞նչ փորձանքէ ազատեց մեզի։ Ապրի՜, ապրի՜. կը տեսնե՞ս, ի՛նչ ոսկի սիրտ ունի եղեր։

ՍԵԴ. պաղ։ Աղէ՛կ. ի՞նչ այդպէս բռընկեցար։

Ա.ԶՆ. ջերմ։ Է՜, գո՞ւն ինչ ըսիր։

ՍԵԴ. Ե՞ս... ոչի՛նչ։

Ա.ԶՆ. Այսինքն, իհարկէ, յայտնեցիր որ շնորհակալ ես, որ չափազանց շնորհակալ ես, որ իր ըրած այս բարիքը ալ երբէք չես մոռնալու, որ... ի հարկէ ըսիր իրեն այս բոլորը։

ՍԵԴ. չոր։ Ինձի հանդիստ թող։ Արագ կ՚երթեւեկէ սենեակին մէջ. կու գա կանգ կ՚առնէ սեղանի գլխուն, աչքերը գզրոցին։

Ա.ԶՆ. զարմանքով կը հետեւի անոր։ Ես քեզի չեմ հասկրնար։

ՍԵԴ. ձեռքով գլխէն բան մը վանելու շարժումով, յանկարծ։ Ո՛չ, ո՛չ, ո՛չ, կարելի բան չէ. սա մասնաւոր հաշիւ. պէտք է կնքե՛լ, խսկոյն։

Ա.ԶՆ. Ի՞նչը կնքել. ինչի՞ մասին կը խօսիս։

ՍԵԴ. Է՜, թող, ձգէ՛, հեռացի՛ր. ես ուրիշ բանի մասին կը մտածեմ։

Ա.ԶՆ. Բայց մի՛ մոռնար, տարրական երախտագիտութիւնը կը պահանջէ, որ մարդուն գոնէ շնորհակալութիւն մը յայտնէիր. ան քու կեանքդ ազատեց. դուն նստեր ես՝ ով գիտէ ի՞նչ յիմար բաներու վրա կը մտմտաս։

ՍԵԴ. զրգռուած։ Գնա՛, գնա՛, ըսի քեզի։ Ի՞նչ ես կեցեր հոգիիս վրա։

Ա.ԶՆ. վիրաւորուած։ Լա՛ւ, վարնտելդ աւելորդ է, ես կարծես քու զէշը կը խօսիմ։

ՍԵԴ. խեղճացած։ Թո՛ղ, Ազնիւս, մի՛ նեղանար. դորժ ունիմ վերջացնելու. թո՛ւղթ մը, որ խսկոյն պէտք է իր տեղը հասցնեմ. պէտք է, կը հասկրնա՞ս. ուրիշ կերպ ես իրաւունք չունիմ վարելու, հոգի՛ս. աղաչելով։ Իրաւունք չունիմ, չեմ կրնար, ինչ ալ որ ըլլա...

Ա.ԶՆ. Ի՞նչը։

ՍԵԴ. Իսկ... իսկ ինչ որ ինձի կը վերաբերի, իմ անձնական խընդիրներուն, ատոր մասին վերջը կը խորհինք, վերջը։

Ա.ԶՆ. Լա՛ւ, թող ըլլա վերջը. հանդստացի՛ր, ես կ՚երթամ. կը խօսինք վերջը։ Դուրս։

*

ՍԵԴ. Այո՛, ասիկա վերջը. գրպանի նամակը սեղանին վրա դնելով։ Նախ... նախ այն մի՛ւսը. կը նստի սեղանին առջևը ու գղրոցէն կը հանէ վճռագիրը։ Նախ ասիկա։ Կը բանա, կը դնէ սեղանին. կը հանէ գղրոցէն կնիքը, կը նայի, կը թանաքոտէ ու նորէն ծանր կը դնէ ցած։ Կամաց կ'ելնէ ոտքի, կը վերցնէ միւս նամակը, կը դիտէ մտասղջ. կը վերցնէ և վճռագիրը միւս ձեռքովը, ու ծանր ծանր, աչքերը անթարթ կէտի մը յառած, երկու ձեռքերը կը սկսի կշռելի նժարներուն պէս կշռելու։ Դադար պահ մը, վճռապէս կը նետէ նամակը մէկ կողմ, կը նստի շտապ, արագ կը բանա նորէն վճռագիրը, կը բարձրացնէ կնիքը թղթին վրա, իջեցնել կ'ուզէ, որ կէս ճամբին կանգ կ'առնէ։ Քարացում։ Դուրսը ոտնաձայն. կը կնքէ յանկարծ ուժով. տեսակ մը վախով կնիքը կը ձգէ բաց գղրոցին մէջ, ու ինքն ալ անմիջապէս սեղանէն ետ կը քաշուի։

*

ՍԵԴ. մոնողին դէմ։ Ա՜, Շահո՛ն։
ՇԱՀ. Ի՞նչ կա, չկա։
ՍԵԴ. Նա՜, հո՛ն է, վերցուր։
ՇԱՀ. Ի՞նչը։
ՍԵԴ. մատնացոյց կ'ընէ, առանց ինքը այն կողմ նայելու։ Հո՛ն, հո՛ն, սեղանի՛ն վրա։
ՇԱՀ. Թուղթը արագ աչքէ անցընելէն ետքը։ Ա՜խ, արդէն... Այս ե՞րբ վճռուեցաւ։
ՍԵԴ. տխուր։ Երէկ գիշեր. ժողովը։
ՇԱՀ. Լա՛ւ. կը յուսամ, ես ալ երկար սպասցրնել չեմ տար. կը դնէ ծոցը։
ՍԵԴ. Իսկ հիմա գնա՛։ Հոս այլ ևս ո՛չ մի խօսք այդ մասին. քովն սենեակը մատնանիշ կ'ընէ։ Ես ինքս կու գամ իրիկունը քեզի. պէտք եղածը կը խօսինք։
ՇԱՀ. Լա՛ւ։ Քիչ կը մտածէ. մտախոհ ու ծանր կ'ուղղուի դուրս. դռան մէջ կը հանդիպի Աղնիւին, որուն ղլուխ կու տա ու կը մեկնի։

*

Սեղրակը կը նետուի բազկաթոռի մը մէջ։
Ա.ՋՆ. մտենալով քնքուշ ու զգուշ Աւարտեցէ՛ք գործդ, Սեղրակ։
ՍԵԴ. Գո՞ր ծը..., Այո՛. վերջացա՜ւ, ալ վերջացա՜ւ։
Ա.ՋՆ։ Այդպէս նեղացա՞ծ։ դա ի՞նչ գործ էր։ ի՞նչ ըրիր որ։
ՍԵԴ. նախ շեշտակի կը նայի քրոջը, վերջը կը բարձրանա նստած տեղէն ու հանդիսաւոր շեշտով մը ձեռքը սեղանին զարնելով։ Պարոնա. պարոնաւորութի՛ւն. ուրիշ ոչի՛նչ։

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ

Դառախիտ պարտէզ։ Հին տան մուտքը։ Ճակատը պատ, որի վրա փողոց տանող փայտէ դուռ մը։ Ոստերով աւելի խիտ է ծածկուած աջ կողմը, ուր դրուած է փոքր կլոր սեղան մը ու երկու-երեք աթոռ։ Սեղանին վրա ափսէի մը մէջ շիշ մը օղի, գաւաթիկներ ու աղանդեր։ Ճիւղերէն կախուած է լապտեր մը։

Ա. ՏԵՍԱՐԱՆ

Դառերուն ետևէն իրիկնադէմի կարմիր-ժժգոյն լոյս։

Որբևայրին կը կարէ կարը խիստ աչքերուն մօտեցուցած. քովը աթոռին վրա կարի պարագներ։ Քիչ աւելի առաջօր Մուշեղ ու Արմենակ նարտ կը խաղան. Աբրահամ նստած կը դիտէ։

ԱԲՐ. Նա՜, խաղը դարձաւ։
ԱՐՄ. Ո՛չ, ո՛չ, ինչո՞ւ։ Ա՜յ, մի՛այն թէ մանր չի դա. աղաչելով։ Ա՜յ, զարի՛կս, անուշի՛կ զարի՛կս, ոտքդ պաղնեմ զարիկս, մանրուք չի դաս. կը նետէ։ Թո՛ւ, բաղդ չունիմ որ։
ԱԲՐ. Դէ՜, ալ ձեր խաղին խերը տեսէք։
ԱՐՄ. Ո՛չ։ Դեռ ձեռք մը ալ ունիմ։
ՄՈՒՇ. Կը կարժե՞ս. զարերը շարժելով հրամայական ու վստահ։ Դէ՜, զա՛ր, հայտէ նայինք, գոյդ մը. գիտե՞ս ա՞ խոշորիկէկ։ Կը նետէ։
ԱԲՐ. Հիացած։ Ո՜հ։
ՄՈՒՇ. Ապրի՛ս։
ԱՐՄ. Ձեռքի քարերը նարտին մէջը թափելով։ Է՜, պարապ բան է, էֆէնդի՛ս, ձեզի հետ խաղալ չըլլար։ Ոտքի։
ԱԳՐԻ. Ո՞վ տարաւ, նայինք։
ԱՐՄ. Դէ՜, իմարկէ, նորէն ձեր եղբայրը։ Զարը որ չի դա՝ ի՞նչ կրնաս բնէր։
ՄՈՒՇ. Զարը որ չի դա։ Այդպէս որ նստես աղաչես ու պաղատիս՝ իմարկէ որ չի դար։ Զարն ալ մարդոց պէս է. հրամայէ՛ ու կը կատարեն։

ԱՐՄ. Է՜, հրամանը ի՞նչ ընէ, խնդիրքը ի՞նչ։ Մարդ բաղդ պիտի ունենա, էֆէնդիս։ Ես արդէն բաղդ չունիմ որ։

ԱԲՐ. որ զբաղած է իրեն օդի լեցընելով։ Բաղդը իհարկէ, բայց բանը եկած զարէն օգուտիլ գիտնալն է։ Կը կոնծէ։

ՄՈՒՇ. Թեթև մը Արմենակի ուսին զարնելով։ Մարդուս բաղդը ի՛նքն է, ի՛նքը, բարեկամ։

ԱՐՄ. Է՜, վերջապէս. մ՚ոը աթոռի մը վրա դրած թուղթի փաթեթը վերցընելով։ Ուրեմն, էֆէնդի՛ս, վաղը բերեմ ձեր ղրասենեակը։

ՄՈՒՇ. Այո՛։ Բայց անպատճառ հասցրնէք. դեռ ուրիշ բաներ ալ ունիմ արտագրել տալու։

ԱՐՄ. Ինչպէս որ կը հրամայէք, էֆէնդիս։ Բոլորին։ Ձեր խոնարհ ծառան։

ՄՈՒՇ. գլխով կ՚ընէ։

ԱՑՐԻ. Երթա՛ք բարով։

Արմենակ դուրս պարտէզի դուռնէն։

*

ԱԲՐ. Խեղճ տղա է. գլխուն տւած։

ԱՑՐԻ. Ո՞վ բսաւ. դուք անոր գլուխը ծռած քալելէն մի՛ խաբուիք։ Մ՚յ, Մուշեղ, խօսքիս նշան դի՛ր դուն. անիկա իր աղաչելովն ու պաղատելովը տես քանի մը տարիէն մինչև ուր կը հասնի. կարը ժողվելով։ Քեզի պէս տիք ըլլալն ալ բան չէ. մարդ խնդրել ալ պիտի գիտնա։ Մէկ ուրիշը քու տեղդ, այսպէս փաշային մօտիկ, այսպէս բարեկամ, մինչև հիմա արդէն գործերը շտկած կ՚ըլլար ու կոկիկ գումար մը մէկդի դրած։

ՄՈՒՇ. Բայց ան ատեն, փոխանակ բարեկամը ըլլալու, կը դառնար անոր ծառան։

ԱՑՐԻ. Ծառա՞. ինչո՞ւ. ծառա։ Հապա մինչև ե՞րբ այդ քու ամսական տաստասանրհինգ ոսկիովը։ Փաստաբա՞ն. մինչև ե՞րբ. շունէն շատ են հիմա փաստաբանները։ Հերիք է փաշային բառ մը ըսես, քեզի համար խոկոյն մարդավարի տեղ մը կը ճարէ, ու մենք ալ վերջապէս բանի մը կը նմանինք։

ՄՈՒՇ. արհամարանքով։ Բանի՛դ գնա՛, բանի՛դ գնա։

ԱՑՐԻՆ. ուսերը ցընցելով՝ կարը կը վերցընէ ու կը մտնէ տուն։

*

ԱԲՐ. քիչ մը եաբը։ Այս քանի օրը փաշային մօտը եղե՞ր ես։

ՄՈՒՇ. Չէ՛։ Անցած շաբաթ իրիկուն էր, կարծեմ։ Կանչեր էր. հիւանդ էր քիչ մը ու կոտրըւած։ Երկար գանգատուեցաւ. նորէն ծերրա-

կալութիւններ են եղեր գաւառները, դէպով նամակներ են բռնուած։ Թափեց առջևս։ «Դէ՜, տեսէք, կ՚ըսէ, չիմար չեն այդ մարդիկը. եթէ իրենց չեն խնայեր, գոնէ ժողովրդին խնայեն, կ՚ըսէ»։ Բռնուածներէն մէկուն համար հարցուց՝ թէ կը ճանչնամ. ըսի՝ անունով լսեր եմ. ալ ոչի՛նչ չբսաւ։ Այնպէս շուն մարդ է որ. ու այնպէս մարդոց պարտաւորել գիտէ ու իրեն կապել։ Ես շատ քիչ մարդու եմ հանդիպած, որու հետ խօսիլը այնպէս հետաքրքիր ըլլա, ինչպէս փաշային հետ։

ԱԲՐ. Ան ալ քեզի համար միւնոյն բանն է ըսեր։

ՄՈՒՇ. Գիտե՛մ. այս տեսակ իրար ակռա ցոյց տալը սովորաբար փոխադարձ կ՚ըլլա։ Այն իմ հարցաքննութեանս գիշերն էր. հինգ-վեց ժամ շարունակ խօսեր էինք ու դեռ չէինք վերջացեր, իսկ ես արդէն գիտէի որ վրան ազդած եմ. ես ալ իրմէ էի ազդուած։ Ի՞նչ տարօրինակ գիշեր էր ան... հը՞, իմ հարցաքննութիւնը... կ՚ելնա իր միտքերուն մէջ. քիչ լուռ. յանկարծ։ Գիտե՞ս, Ցակոբեանը մեռեր է։

ԱԲՐ. Ո՞ր Ցակոբեանը. սա՞, որ դուն...

ՄՈՒՇ. Գլխով կ՚ընէ թեթև։

ԱԲՐ. Բանդի՞ն մէջ։

ՄՈՒՇ. Այո՛. կիրակի գիշեր. քիչ լուռ։ Եօթը ամիս... աւելի չգիմացաւ։

ԱԲՐ. Ա՜, արդէն հիւանդոտ մարդ էր. անիկա դուրսն ալ աւելի երկար ապրելու չէր։

ՄՈՒՇ. մտածկոտ։ Կը ցաւի՛մ, կը ցաւի՛մ, բայց ի՞նչ կրնայի ըներ. տեսակ մը ինքն իրեն հետ։ Ինչո՞ւ էին այդքան չիմար, ինչո՞ւ իմ անունս մէջտեղ ձգեցին. հին հին նամակներ, չիմար թուղթեր, ինչո՞ւ էին պահեր, ինչո՞ւ անպատճառ ես։ Ա՛տ միւնոյն է, թէ անոնք իմ անունս յայտնեցին. ես ալ ստիպուեցա իրենց անունը յայտնելու. ի՞նչ ընեմ, եթէ ուրիշ կերպ կարելի չէր. ինչո՞ւ ես պէտք է վրաս առնէի այդ բոլորը. ո՛չ, ես ախորժակ չունիմ բանդերուն մէջ փաթթուիլ իմ ջահիլ օրերու չիմարութեանս համար։ Ես ամէն բան շիտակ ու պարզ ըսեր եմ, ես աղատեր եմ ինծի. եթէ կրնան թող անոնք ալ իրենց գլուխը մամատան։ Ես... ես մինթէ շատ ուրախ եմ, որ այսպէս եղաւ, որ ուրիշներուն արիւնը մտաւ։

ԱԲՐ. Պա՛տրաստ խօսք։ Դուն ոչ օքի արիւնը մտած չես։ Անոնք իրենք են իրենց արիւնը մտնողը. անոնց ըրածը արդէն խենթութիւն է։

ՄՈՒՇ. Վերջապէս անոնց սիրուն ես չէի կրնար էշ-նահատակ դառնար։

ԱԲՐ. Իհարկէ. օդի լեցընելով։ Աշխարհիս բանը այդպէս է. եթէ դուն չի տաս ուրիշներու գլխուն, ուրիշները կու տան քու գլխուդ։ Քէֆդ նայէ։ Կը կոնծէ։

ՄՈՒՇ. Զայրացած։ Դուն ալ փէշերդ ժողվեցիր ու ելար ինծի սիրա տալու։

ԱԲՐ. կոտրուած։ Ի՞նչ սիրա տալու բան կա. միայն ըսել կ'ուզէի, որ շատ բարակը մանել չարժէր։

ՄՈՒՇ. խոժոռ։ Ցիմա՛ր ես դուն։ Ուրիշ բան է խղճալը, ուրիշ բան է ղղջալը։ Ես ղղջալ չեմ սիրեր. ամենէն անմիտ բանն է դա. և պէտք ալ չունիմ ղղջալու։

ԱԲՐ. Ես ի՞նչ ըսի որ։

ՄՈՒՇ. խիստ։ Վերջ տուր։

ԱԲՐ. բիչ վերջը. ժամացոյցը նայելով։ Դէ՛, շոգենաւիս ժամանակն է. Երթամ։ Ինծի՛ նայէ. ինծի սա՛նկ կէս ոսկի մը չէիր կրնար նորէն... Միջնորդի գործ մը կա. յոյս ունիմ շուտով գլուխ հանեմ. այն առեն...

ՄՈՒՇ. գրպանէն ոսկի դրամ մը սեղանին նետելով։ Աղէկ, աղէկ։

ԱԲՐ. օդի լեցընելով։ Հատ մը ալ ճամբու համար։ Կենա՛ցդ. Ասուած առողջութիւն տա։

*

ԱՅՐԻ. Ա՜ս ի՞նչ անսպասելի բան։ Հրամեցէ՛ք, խնդրեմ, հրամեցէք։ Մուշեղ նայէ քեզի ինչ անսպասելի հիւր եմ բերեր։

ՍԵԴ. որբևայրիին հետ տան դուռնէն պարտէզ մտնելով՝ բոլորին։ Բարև՛։

ՄՈՒՇ. Ա՜, պարո՛ն Սեդրակ. խնդրեմ, խնդրեմ։

ԱՅՐԻ. Մուշեղը մեզի ըսաւ որ վերադարձեր էք Եւրոպայէն։ Է՜, մայրիկդ, ո՞վ գիտէ, ինչպէս ուրախ է։ Ցը՛, ցը՛, ցը՛, որ վրան կը նայիմ հաւատալս չի գար։ Կը յիշէ՞ք Աբրաքսիիս հետ կը վազվզէիք սանդուղներէն վե՛ր, վա՛ր. պատառ մը տղա էիր։ Երթամ, երթամ Աբրաքսին ղրկեմ, ինչքա՜ն պիտի ուրախանա։

ԱԲՐ. Ինծի ալ կը ներէք։ Որբևայրիին եւեւէն կը մտնէ տուն։

*

Բ. ՏԵՍԱՐԱՆ

ՍԵԴ. Այս գիշեր քրոջս հետ հոս Թորոսեաններուն հիւր էինք։ Առիթէն օգտուելով՝ եկա ձեզի իմ պարտքս կատարելու։

ՄՈՒՇ. Ի՞նչ պարտք։

ՍԵԴ. Նամակի մասին է խօսքս. սրտանց շնորհակալ եմ ձեզի ձեր այդ բարեկամական ազնիւ վարմունքի փոխարէն։

ՄՈՒՇ. Բայց դուցէ տակը որևէ ուրիշ հաշիւ մը ունիմ։

ՍԵԴ. վստահ։ Ո՛չ. չեմ հաւատար։

ՄՈՒՇ. Շնորհակալ եմ և ես. տէ՛ք ձեռքերնիդ։ Տերմ շարժումով մը ու վստահօրէն կը մօտենա կը մեկնէ ձեռքը Սեդրակին. սա նախ բնազդօրէն կը բարձրացնէ ձեռքը, բայց յանկարծ ցընցող շարժումով մը ետ կը քաշէ ու ինքն ալ քայլ մը ետ։

ՍԵԴ. Այդ... հա՛... ի՞նչ պիտի ըսէի։

ՄՈՒՇ. Նախ կը սառի, կը կիտէ ունքերը. վերջը հեգնոտ ծիծաղով։ Ա՜խ, հա՛. կը հասկնամ... իմարկէ։ Լա՛ւ. գոնէ նստեցէ՛ք, խնդրե՛մ, ոտքի վրա մնացիք։

ՍԵԴ. Նէրեցէ՛ք. ես այնպէս վայրկեանն մը միայն։

ՄՈՒՇ. Նստեցէ՛ք. ես ձեզի չեմ ուտեր։ Անկեղծ խօսելով՝ շատ ուրախ եմ որ եկաք։ Դուք ինծի իմ երիտասարդութեանս տաք գլուխ օրերը կը յիշեցնէք, որոնք որքան ալ ցիմար ու անմիտ եղած ըլլան, դարձեալ սիրելի են ամէն մարդու։ Երբ մարդ դեռ կը հաւատա ամէն տեսակ թռուցիկ ու պայթուցիկ բառերու, ամէն հովէ կ'ոգևորուի և, հեգնօրէն բառերը ընդգծելով—ժողովուրդին ծառայելու պահանջը մէջը կ'եռա. կը ծիծաղի։ Չէ՞։

ՍԵԴ. Ինչո՞ւ կը խնդաք. մի՞թէ ժողովուրդին ծառայելը...

ՄՈՒՇ. Թողէ՛ք, խէր Աստծու։ Դուք դեռ միայն գրքերէն կը ճանչնաք այդ անկոտոր նախիրը, որ ժողովուրդ կ'ըսի. մտէ՛ք մէջը՝ վերջը ձեզի հետ կը խօսիմ։ Իսկ մարդու մէջ, հասո՛ւն, առողջ մարդու մէջ ոչ օրին ծառայելու պահանջը չկա, ո՛չ ժողովուրդին, ո՛չ ալ մէկ ուրիշին։ Կա ուրի՛շը իրեն ծառայեցնելու բնական պահանջը. ատիկա կը հասկնամ։

ՍԵԴ. տխուր։ Իրա՞ւ։

*

ԱՐԱՔ. տան սեմէն յանկարծ պարտէզ վազելով։ Ա՜յ, սիրուն անակընկալ մը. աշխուժ ձեռք տալով։ Բարև ձեզի։ Ընենք ճիշտ չէ։ Ես գիտէի որ գայիք պիտի, ես հաստատ գիտէի որ գայիք պիտի։

ՍԵԴ. Ի՞նչպէս. գիտէի՞ք որ այսօր գայի պիտի։

ԱՐԱՔ. Այսօր, թէ վա՛ղը. բայց գիտէի որ գայիք պիտի։ Թէև դուք հիմա, ո՜հ, մեծ մարդ էք, գիտնական, եւրոպական, բայց վերջապէս սիրտս ինծի ըսաւ, որ գայիք պիտի։

ՄՈՒՇ. Ինծի՛ նայէ, Աբրաքսի՛. հիմա սրտիդ ըսածները դի՛ր մէկդի ու նախ և առաջ գնա՛ պարոն Սեդրակին համար, օդիի սեղանը մատնանիշ—մաքուր գաւաթիկ մը բե՛ր։ Հայտե՞ նայի՛մ, հասակդ տեսնեմ։

ՍԵԴ. Ո՛չ, ո՛չ, ես շնորհակալ եմ. ես ըսի արդէն, որ միայն վայրկեան մը։

2

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Ադա.ՍՍՍՌ
Հ. Մ. Մ. Մ

ԱՐԱՔ. Է՜, բերեմ գինի. մտերիմ—և լաւը։
ՍԵԴ. Դուք շատ բարի էք, օրիորդ. միայն... միայն արդէն ուշ է,արդէն...
ԱՐԱՔ. Չեմ հասկընար։ Ան ատեն սա ի՞նչ գալս էր, ի՞նչ գնալ։ Պարապ խօսք։ Իսկոյն. կը վազէ տուն.
ՍԵԴ. Օրիորդ...

*

ՄՈՒՇ. Թողէ՛ք։ Թող բերէ։ Կը տեսնէ՞ք Արաքսիս ի՞նչ խելօք աղջիկ է դարձեր։
ՍԵԴ. Մտածկոտ։ Ըստ երևոյթին շատ կը սիրէք։
ՄՈՒՇ. Այո՛. տան կենդանութիւնը ան է ու իմ մխիթարանքս։
ՍԵԴ. Ի՞նչպէս. փորձող—ուրեմն մխիթարանքի կարօտ ունիք. մինթէ դոհ չէ՞ք ձեր կեանքէն։
ՄՈՒՇ. Դոհ։ Ո՞վ է դոհ աշխարհիս երեսին։
ՍԵԴ. Յաղթական։ Չէ՞, դժբաղդ էք, չէ՞։ Մի ծածկէք։
ՄՈՒՇ. Ներողամիտ։ Ա՜խ, դուք ու ձեր այդ խոշոր խոշոր բառերը։ Դժբաղդ, ինչո՞ւ։ Այո՛, այնքա՛ն, ինչքան ամե՛ն մարդ, որ ապագայի հաւտալու չափ ապուշ չէ և ճակտին տակը աչքեր ունի կեանքի տաղտուկն ու դատարկութիւնը տեսնելու համար։
ՍԵԴ. Իհարկէ՛. ով ուրիշի համար ապրիլ չգիտէ, ան կեանքի համն ալ չգիտէ։
Մուշեղ Հեգնոտ ծիծաղով ձեռքը թափ կու տա։

*

Արդէն բաւական մթնած է։
ԱՐԱՔ. ձեռքը շիշ մը գինի, երկու բաժակ ու թևին տակ սփռոց մը։ Ահա՜ ձեզի և գինին։
ՄՈՒՇ. Է՜, թողնենք հիմա այդ բոլոր փիլիսոփայութիւնը մէկդի։ Հիմա դուք իմ հիւրս էք. զարթ իրիկուն մը անցնենք։
ԱՐԱՔ. Եւ ի՞նչպէս զարթ։ Սփռոցը կը փռէ սեղանին, կը դնէ գինին, օղին ու բաժակները վրան։
ՄՈՒՇ. Ա՜յ, ապրի՛ Արաքսիս։ Ո՞ւհ պահծու գինին է դուրս եկեր։ Եթէ գիտնաք, պարո՛ն Սեդրակ, թէ ատիկա ի՞նչ մասնաւոր պատիւ մըն է ձեզի համար։ Գրեթէ ամեն իրիկուն կռիւ կա սեղանին վրա այդ գինիի սիրուն։ Մէյ մը համը տեսէ՛ք։
ԱՐԱՔ. Կեցէ՛ք սա լապտերն ալ մէկ վառեմ. կը բարձրանա աթոռին՝ ճիւղերէն կախուած լապտերը վառելու։
ՄՈՒՇ. Ահա՜ ասիկա իմ օղիս. ես կերակուրէն առաջ առանց օղիի չեմ ըլլար։ Գինին հացին վրա, անոր ժամանակը վերջն է։ Ա՜յ, պարոն Սեդրակ, լաւ ուտէն ու լաւ խմելը կը սիրեմ, ի՞նչ մեղքս պահեմ։ Ամեն անախորժութիւն նորէն կերպ մը կարելի է տանել, երբ մարդ շնորհքով ուտելիք ունենա ու այսպէս պատուական խմելիք։ Գիտէ՞ք, համեղ պատառի մը համար ի՞նչ ոճիրներ կը գործըւին։
Սեդրակ նստած է խոժոռ ու մռայլ։
ԱՐԱՔ. Ա՜յ, այսպէ՛ս. կը քաշէ աթոռ մը ու կը նստի սեղանին ճակատը երկուքին մէջտեղը. գինի լեցընելով։ Դէ՜, ուրեմն ձեր կենա՛ցը, բարի՛ եկաք։
ՄՈՒՇ. Ձեր կենա՛ցը, բարեկա՛մս. նշանակիչ։ Կեանքը կարճ է ու անիմաստ. և մենք չենք որ կեանքը փոխենք պիտի. ձեր կենա՛ցը։
ՍԵԴ. Շնորհակա՛լ եմ։
ԱՐԱՔ. Չէ՜, չեղա՛ւ. բերէ՛ք բաժակնիդ. ի՞նչ կը մտմտաք այդպէս խորը. կը զարնեն բաժակները։ Չէ՛. Եւրոպան ձեր վրա չէ եկեր. դուք հիմա մի՞շտ էք այսպէս թթուած։
ՍԵԴ. ծիծաղելով թթուա՞ծ։ Ո՜չ։
ԱՐԱՔ. բերկրանքով։ Վա՜յ, ձեր ծիծաղը։ Գիտէ՞ք, ամենևին չէ՞ք փոխուած. մի՛ևնոյն հին Սեդրակը։ Առաջին նայուածքիս միայն այնպէս քիչ մը ուրիշ տեսակ երևցաք։ Նորութիւնը սա մօրուքն է. քիչ մըն ալ այնպէս դէմքերնուդ ուրիշ բան մըն է եկեր։
ՍԵԴ. Ի՞նչ բան, օրինակի համար։
ԱՐԱՔ. Ա՛յնպէս... ես ալ չգիտեմ. տեսակ մը... վերջապէս էրիկ-մարդ էք դարձեր։ Դէ՜, պատմեցէ՛ք, նայիմ, այս քանի տարին ինչե՞ր տեսաք, ինչե՞ր ըրիք։
ՄՈՒՇ. Բայց նախ բաժակ մըն ալ գինի լեցո՛ւր, որ պատմիչը իր ուժերը ժողվէ. թէ չէ՝ այսպէս չո՛ր չոր։
ԱՐԱՔ. Ճի՛շտ է. լեցընելով,—վերուցէ՛ք։

*

ԾԱՌ. տան սեմէն. Հիւսնի բէյն է, էֆէնդի՛։
ՄՈՒՇ. Ո՞վ. դժգոհ։ Այս վայրկեանիս.
ԾԱՌ. Տիկինը ըսաւ, որ ինքը գործ ունի...
ՄՈՒՇ. Իսկոյն, իսկոյն. ծառան դուրս։

*

ԱՐԱՔ. Է՜, սատանան տեսնէ այդ Հիւսնիին դեղին երեսը։
ՄՈՒՇ. ոտքի։ Կը ներէ՛ք ինծի։ Փոստաբա՛ն մըն է, պաշտօնակիցս. կ'աշխատիմ հնար եղածին չափ շուտով գլխէս ցանելու։ Ցոյս ունիմ որ չէ՞ք մեկնիր մինչև վերադարձս։ Դէ՜, Արաքսի՛, քեզի նայիմ, հիւրդ չի ծանձրանա. դուրս։

ԱՐԱՔ. Եռեէն։ Է՞, դուն գործիդ գնա. մենք դեռ մեր մանկութենէն վարժուած ենք չի ծանծրանալու, երբ իրարու հետ ենք. չէ՞։

ՍԵԴ. Այո։ Եւ այդ բոլորը ուրեմն դեռ կը յիշէ՞ք։

ԱՐԱՔ. ուռած։ Ո՛չ. ամենևին՝ն. ոչ մի բան. յանկարծ փոխուած տոնով։ Հապա այդ տեսակ հարց կու տա՞ն։ Իհարկէ, կը յիշեմ. հապա ի՞նչ գիտցաք. ամէ՛ն, ամէ՛ն բան։

ՍԵԴ. ժպտուն։ Մի՞թէ։

ԱՐԱՔ. Ամենքը ձեզի՞ կը կարծէք. գացիք Եւրոպա ու ալ ամեն բան մոքէ անդին նետեցիք. ձեր հին ծանօթները, բարեկամները... բարեկամուհի՛ն։

ՍԵԴ. Իզո՞ւր։ Ձեր մեղադրանքը սխալ է։ Ես Եւրոպա ալ ձեր մասին յաճախ մտածեր եմ։

ԱՐԱՔ. Իրա՞ւ։ Ա՜յ, ատիկա սիրուն է. ա՜յ, հիմա ուրախ եմ։ Դէ՞, ուրեմն ես ալ խոստովանիմ։ Ես ալ ձեր մասին շա՛տ եմ մտածեր. և շա՛տ շատ. այնպէս, երբեմն վրաս բան մը կու դար, կ'ըսէի՝ նստիմ նամակ մը գրեմ։

ՍԵԴ. Բայց չի գրեցիք։

ԱՐԱՔ. Մտածեցի, որ վրաս խնդաք պիտի, որ երևի դուք ինծի արդէն մոռցած էք բոլորովին. յանկարծ։ Կը յիշէ՞ք այն տարւան ձեր գրած նամակները, դուք որ գիւղն էիք։ Ես դեռ անոնք բոլորը պահեր եմ. անկէ ետքը քու նէիրած նկարներդ, այն ոտանաւորի գիրքը, մի՞թէ դ է, կապոյտ երեսով։

ՍԵԴ. ժպտուն՝ աղջկա աչքերուն մէջ թաղուած. երկուքն ալ արմուկով ինկած են սեղանին։ Մարդ իր պատանեկութիւնը երբէ՛ք չի մոռնար. մանաւանդ իր պատանեկութեան ընկերուհին։

ԱՐԱՔ. Այնպէս չէ՞։ Հապա մեր դպրոցը. դեռ աչքերուս դէմն է այն պզտիկ պարտէզը, ուր մանչ-աղջիկ բոլորս միասին թափուած կը խաղայինք։ Դուն որ միշտ մօտերս էիր. կը յիշե՞ս Արուսեակը, ա՛ն, որ աղէսի դունչ ունի կ'ըսէիր։

ՍԵԴ. Լսեցի որ Ամերիկա է գացեր, հա՞։

ԱՐԱՔ. Այո՛, հօրը մօտ. ծիծաղելով։ Օր մը ալ որ միասին անուշը գողցանք պահարանէն, հո՛ն, մեր Իւսկիւտարի տունը։

ՍԵԴ. խնդալով, ոգևորուած։ Իրա՛ւ, իրա՛ւ. բալի անուշ էր, միաբս է։ Գողցած բանը միշտ անուշ է, ինչո՞ւ։

ԱՐԱՔ. յանդիմանական, ծիծաղելի լրջութեամբ։ Գողցած բա՞նը, հա՞։ Կը յիշե՞ս։

ՍԵԴ. Ի՞նչը։

ԱՐԱՔ. Անգամ մը որ կուեր էինք. ու քանի՞ օր էր իրարու հետ չէինք խօսեր. թէև շարունակ չորս դիս կը դառնայիր

ՍԵԴ. Զէ՛. ես բնաւ քու չորս դիդ չէի դառնար։

ԱՐԱՔ. Ը՞. դեռ նոյն հպարտն ես. դիցուք։ Իսկ իմ սիրտս այնպէս քեզի հետ խօսիլ կ'ուզէր, այնպէս կ'ուզէի հետդ ըլլամ։ Եւ այնպէս որոշ միտքս է, բոլոր մանրամասնութիւնները։ Իրիկունը նստեր էի մեր մեծ թթենիին տակը ու կը բանէի. դուն ալ հո՛ն, սա՞նկ, չորս-հինգ քայլ անդին զնդակիդ հետ կը խաղայիր. և դիտմամբ. կը կարծես՝ չէի՞ հասկնար։ Անգամ մը ն ալ զնդակդ շիտակ փէշերուս տակը. եկար առնելու. շրթունքներդ ուռած, յամա՞ռ. այնպէս ծիծաղելի էիր, ու այնպէս սիրտս խենթի պէս կը նետէր։ Ուռեցա, որ դանեմ տամ. դուն ալ էիր ծռեր դէպի աթոռս... Է՞, ալ չե՛մ յիշեր, չե՛մ յիշեր։

ՍԵԴ. Բայց ես կը յիշեմ։ Ցանկարծ մեր գլուխները եկան իրարու. ես երկու ձեռքով բռնեցի քեզի ու թուշդ պագի։

ԱՐԱՔ. Բայց ես ալ բարկացա վրադ։

ՍԵԴ. Հա՞. ատիկա միտքս չէ՛։

ԱՐԱՔ. Հա՞, միտքդ չէ՞։ Ան ատեն ալ ըսիր՝ «գողցած բանը անուշ է». ատոր համար ալ այս բոլոր պատմութիւնը հիմա միտքս ինկաւ։

ՍԵԴ. Է՞, ետքը։

ԱՐԱՔ. Ետքը ի՞նչ. խնդալով։ Առիր զնդակդ ու փախար։

ՍԵԴ. քիչ մտածելէն վերջը՝ յանկարծ կը վերցնէ թափով գինիին շիշը ու բաժակները լեցնելով։ Եկո՛ւր, Արաքսի, եկո՛ւր խմենք մեր մանկութեան, մեր միասին անցուցած կեանքի ու յիշատակներու կենացը։

ԱՐԱՔ. ջերմ։ Խմենք։

Բաժակները կը դարնեն։ Պահ մը շեշտ աչք աչքի, տարւած։ Տղան բոլորովին լուրջ. բաժակը փոխանակ շրթունքին տանելու, կամաց կը դնէ սեղանին, երկու թևով կը գրկէ աղջիկը ու շրթունքներով կը յարի անոր շրթունքներուն. արագ։ Երբ կը բաժնուին՝ աղջիկը բոլորովին գունատ ու լուրջ. երկուքն ալ պահ մը լուռ ձեռք ձեռքի։

ՍԵԴ. Վշտացած. բռնի ժպիտով։ Գողցած բանը անուշ է միշտ։

ԱՐԱՔ. ձեռքը քաշելով։ Թողէ՛ք, թողէ՛ք. մօրեղբայրս։

*

ՄՈՒՇ. մտնելով գոչ։ Ա՛յ կրնանք հանգիստ խօսիլ։

ՍԵԴ. սթափած։ Ո՛չ։ Ես երթամ պիտի. ալ կարելի չէ՛։

ՄՈՒՇ. Սակայն ասիկա չեղա՛ւ։ Զէ՞, Արաքսի՛։ Բայց քեզի՞ ինչ է պատահեր, այդպէս լո՞ւրջ, այդպէս դէմքդ տեսա՞ծ մը։

ԱՐԱՔ. աշխուժանալու ջանքով։ Ոչի՛նչ, այնպէ՛ս. գինին քիչ մը շատ էր թունդ. երևի գլխուս դարկաւ։

ՄՈՒՇ. Հապա՛. իմ հին գինիիս հետ կատակ ընել չըլլար։ Ոչի՛նչ. կ՚անցնի՛։

ՍԵԴ. Ուրեմն, օրիորդ... Գիշեր-բարի։

ԱՐԱՔ. Ցտեսութի՛ւն. ձեռքը տղուն։ Իհարկէ, ասկէ ետքը աւելի շուտ շուտ. ասկէ ետքը արդէն պարտական էք, կարծեմ։

Սեդրակ ուշքը աղջկան՝ մեքենաբար ձեռքը կը մեկնէ և՛ Մուշեղին։

ՄՈՒՇ. Երկու ձեռքով պինդ անոր ձեռքը թօթուելով։ Երթա՛ք-բարով, երթա՛ք-բարով. ծիծաղկոտ։ Ուրեմն ծեռքերնիդ այլ ևս կրնա՞ք տար։ Ա՜յ, ա՜յ, ա՜յ, շատ շուտ կաշառուեցաք. ընդամե՛նը երկու բաժակ հին գինիով։

ԱՐԱՔ. Ինչպէ՞ս թէ։

ՄՈՒՇ. Ոչի՛նչ. կատա՛կ կ՚ընեմ։

Կ՚ուղղուին դէպի տան դուռը։

*

ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐ

Առաջին արարի սենեակը։ Ցերեկ է։

Ա. ՏԵՍԱՐԱՆ

Շահան ու Սեդրակ կեցած են դէմ-դէմի. Շահան սպասողական. Սեդրակ խոր մտածման մէջ աչքերը կէտի մը յառած. քիչ լուռ։

ՍԵԴ. Ուրեմն վա՞ղը։

ՇԱՀ. Այո՛, վա՛ղը. և վստա՛հ եղէք. բոլոր պատրաստութիւնները տեսնուած, ամեն բան կարգին։ Վա՛ղը կ՚ըլլա Սանդարամետին գիրկը. հոն որչափ կ՚ուզէ թող մատնութիւններ ընէ իր քէֆին, կ՚ուզէ բոլոր սատանաները ծերբակալել տա։

ՍԵԴ. ինքն իրեն։ Ուրեմն վա՞ղը։

ՇԱՀ. Ատուծմո՛վ, անպատճա՛ռ։ Դէ՜, սիրելի՛ս, կը յայտնես ուր որ պէտք է. յուզուած։ Եկո՛ւր համբուրե՛ինք, ո՞վ գիտէ՝ ինչ կրնա պատահիր։ կը գրկուին։ Ողջ ծեռք չեմ իյնար, ատոր համոզուած եղիր. պինդ ընկերոջ ձեռքը թափ տալով։ Ինծի չմոռնա՞ք. դէպի դուռը։

ՍԵԴ. յանկարծ պլպլուած. Շահա՛ն... կեցի՛ր։ Արդեօք... արդեօք կարելի չէ՞ քանի մը օր յետաձգէիր։

ՇԱՀ. Յետաձգե՞մ. և ինչո՞ւ։

ՍԵԴ. Ա՛յնպէս. ենթադրենք խնդիրը մեր կողմէն որևէ բարդութիւն մը ստանա։

ՇԱՀ. Չեմ հասկնար. դժգոհ։ Մարդոց այս տեսակ լարուած դրութեան մէջ կարելի չէ պահել. ես, ըսենք, նորէն ոչինչ, բայց ընկե՞ր։ Ցետաձգելը միշտ վտանգաւոր է։ Եւ վերջապէս դուք ձեր բոլոր հաշիւները պարտաւոր էիք առաջուց մտածելու։

ՍԵԴ. Աղէկ. վճռաբար։ Դէ՜, գնա՛. գնա՛ քու գործդ կատարելու։ Միայն լսէ՛. ընդգծելով—վաղը առտու մինչև ժամը ինը հիւրանոցդ ինծի կը սպասես. բայց անպատճա՛ռ, կը լսե՞ս, անպատճա՛ռ. պաշտօնապէս կը պատուիրեմ քեզի. եթէ ճի՛շտ մինչև ինը չեկա, ազա՛տ ես, ըրէ՛ քու պարտքը։

ՇԱՀ. Լեզուիդ տակը բան մը կա, Սեդրակ։
ՍԵԴ. Վա՛ղը, վա՛ղը, առտուն։
ՇԱՀ. Լա՛ւ, կը սպասեմ։ Դուրս։

*

Հաղիւ Շահէն հեռացած է, որ Սեդրակ կը շտապէ դէպի միւս դուռը։

ՍԵԴ. Աղնի՛ւ, Աղնի՛ւ. մի գոս. ու կը սկսի սենեակին մէջ արագ երթևեկելու ձեռքերը գրպանը դրած ու լարուած դէմքով։
Ա.ԶՆ. դռան մէջ։ Ի՞նչ է։
ՍԵԴ. Մուշեղը ուրեմն հաստատ ըսաւ որ պիտի գա։
Ա.ԶՆ. Այո։
ՍԵԴ. Այսօր։ Բայց հաստատ։
Ա.ԶՆ. ուսերը ցընցելով։ Ճաշէն ետքը նորէն կը հանդիպիմ, ըսաւ. քանի որ կանչեր է՝ կ'ուզէի տեսնեմ, ըսաւ։
Սեդրակ նորէն մտասոյզ կը սկսի երթևեկը. ջղոտ, լարուած։
Ա.ԶՆ. քիչ մը դիտելէն ետքը, կասկածոտ։ Ատ ի՞նչ տեսակ գործ ունիս դուն անոր հետ, որ բռներ կանչեր ես ու այսպէս անհամբեր կը սպասես։
ՍԵԴ. Հը՛մ։
Ա.ԶՆ. Քեզի հետ եմ. չե՞ս լսեր։ Ի՞նչ կը մտածես այդպէս խորը խորը։
ՍԵԴ. Ե՞ս։ Կը մտածեմ... կը մտածեմ այն, որ մարդու մէջ մարդը երբէք չի մեռնիր, որ լաւի ու անմաքուր գործի ղգացումը մարդու մէջ կա ու կա միշտ, որչափ ալ որ մարդ ղիտմամբ ուրանալ ուզէ։ Կա՛, դուցէ ժամկուած մոխրի տակ, դուցէ ժանգոտած, բայց կա։ Մոխիրը խառնող ձեռք մը պէտք է, որ աղնիւ կայծերը պլպլան։
Ա.ԶՆ. Իհարկէ՛, եղբայրս, այդպէ՛ս է։
ՍԵԴ. ուրախացած։ Վրայի մոխիրը խառնող ձեռք մը։ Ա՜, շատ խորն է մարդուս սիրտը, թափանցելը դժուար. սուր աչք պէտք է ու կարեկցող ջերմ ղգացում. հոն ի՞նչ կրնա տեսներ տարբեռնակին կոյր գնդակը։
Ա.ԶՆ. վախցած։ Ի՞նչ տարբեռնակ։
ՍԵԴ. Դուն ինչու վախցար։
Ա.ԶՆ. Սեդրակ, Սեդրակ, ի՞նչ է մտքինդ, ի՞նչ գործ ունիս դուն Մուշեղին հետ, ի՞նչ տարբեռնակ, ի՞նչ բան։ Հոգի՛դ սիրես, Սեդրակ, եթէ ինծի կը սիրես, եթէ մայրդ կը սիրես։
ՍԵԴ. սառած։ Խի՞նթ ես, ի՞նչ եղաւ քեզի։
Ա.ԶՆ. Ես հիմա կը հասկնամ. արդէն շատոնց կասկած մը կար մէջս։ Արդէն այս վերջին օրերը դուն բոլորովին ուրիշ տեսակ ես։ Դուն

քու խղճիդ հետ է որ կը կռուիս. մի՛ ծածկեր ինծմէ, Սեդրակ. ես հիմա ամէն բան պարզ կը տեսնեմ, լոյսի պէս։ Լսէ՛ ինծի՝ ձեռքդ արիւնոտ մի՛ ըներ. վերջը ամբողջ կեանքդ կը դղջաս ու քաւել չես կրնար։ Դուն արիւն թափելու համար ստեղծուած մարդ չես։
ՍԵԴ. Բայց իմ մտածածս ընդհակառակը...
Ա.ԶՆ. վախով։ Դո՞ւռն էր։
ՍԵԴ. ուրախ։ Մուշե՛ղը, Մուշեղը. անպատճառ ան է։
Ա.ԶՆ. կը վազէ պատուհանը, կը նայի ու պլպլած։ Ա՛ն է։ Կեցի՛ր։ Թող զարնէ, զարնէ՝ երթա։
ՍԵԴ. Ի՞նչ կը խօսի։ Դէպի դուռը։
Ա.ԶՆ. կը նետուի արագ դռան առաջ՝ դուրս ելնելու արգիլելով։ Ո՛չ, չես երթար։ քրմաբար։ Զեզի կ'ըսեմ՝ չի մտնէ՛ք այդ մարդու արիւնը։
ՍԵԴ. Աղնի՛ւ, խելքդ գլուխդ ժողվէ։ Դէ՜, թո՛ղ, է՜, յանկարծ կ'ելնէ կ'երթա։ Ուժով՝ դուրս։

*

Բ. ՏԵՍԱՐԱՆ

Աղնիւ վշտաբեկ կեցած է պահիկ մը։ Դուրսը ոտքի ձայներ ու խօսակցութիւն։ Աղջիկը կ'ուղղի, կը փոխէ դէմքի արտայայտութիւնը ու սպասող հայեացքը դէպի դուռը։

ՄՈՒՇ. Բարև ձեզի, օրիորդ, անդամ մը ալ։
Ա.ԶՆ. Իսկ մենք վախեցանք, որ ալ չէք գալու։
ՄՈՒՇ. Ո՛չ. քանի որ խոստացա։
ՍԵԴ. Անցնի՛նք սենեակս։
Ա.ԶՆ. ծիծաղով։ Ա՜, ո՛չ։ Պարոն Մուշեղը հիմա իմ հիւրս է. եղբօրը։ Կանչեր էիր, եկաւ առաւուն, թող տունը ըլլայիր։ Հիմա այլ ես ան ինծի համար է եկած. չէ՞, պարո՛ն Մուշեղ։
ՄՈՒՇ. զարմանք։ Եթէ օրիորդը այդ պատիւը ինծի կ'ընէ։
Ա.ԶՆ. արուեստական շատախօսութեամբ։ Քանի՞ քանի տարի է անցեր այն հին օրերէն, դեռ շնորհքով միասին չենք եղած, իսկ պատմելու բան որչա՜փ։ Նստեցէ՛ք, խնդրեմ։
ՍԵԴ. Թո՛ղ. այդ բոլորի մասին մէկ ուրիշ անգամ։
Ա.ԶՆ. Ինչո՞ւ։ Դուն ձգէ քու գործդ մէկ ուրիշ անդամի։
ՍԵԴ. զրդուած։ Հա՜, հերի՛ք է կատակը։ Կարևոր բաներ ունինք խօսելու։
Ա.ԶՆ. Կարևո՞ր։ Եւ վերջապէս ինչէ՞ն դիտես, որ իմ խօսելիքս կարևոր չէ։
ՄՈՒՇ. զարթ։ Օրիորդը իրաւունք ունի։
Ա.ԶՆ. եղբօրը, մեղմ։ Մի՛ բարկանար։ Ուրախ եղիր, քիչ մը ալ եղիր անփո՛յթ։

ՄՈՒՇ. Ի՜նչ սիրուն տրամադրութեան մէջ էք այսօր, օրիորդ։ Սրտանց ուրախ եմ։ Եկէ՛ք լսենք ձեր քրոջը, պարոն Սեդրակ, թողէ՛ք ձեր լուրջ խօսակցութիւնը մէկ ուրիշ անգամի։

ՍԵԴ. Բայց... բայց...

ԱԶՆ. Առանց բայցերու։ Մ՚յ, եթէ գեղեցիկ բան մը ընել կ՚ուզես, կ՚երթաս վերէն սիկառ մը բերելու. Մուշեղին։ Ես գիտեմ, որ դուք ծխել կը սիրէք։

ՄՈՒՇ. Չեմ մերժեր, օրիորդ։

ԱԶՆ. Թէև տունը ծխող չկա, բայց մեծ քեռիս շատ նուրբ ծխող է. միայն սիկառ, ան ալ լաւը. անոր համար կը պահենք. եղբօրը —վե՛ր, կլոր սեղանին վրա։

ՍԵԴ. Ի՞նքդ ինչու չես երթար։

ԱԶՆ. կատակի ձևով։ Ես, ըսի՛, կարևոր խօսելիք ունիմ պարոն Մուշեղին հետ։

ՄՈՒՇ. ծիծաղով։ Քանի որ այդպէս է՝ բերէ՛ք, պարո՛ն Սեդրակ։ Արդէն կանանց կամքը կատարե՛նք պիտի. ուզենք չուզենք։ Մեր ճակատագրական դժբաղդութիւնը։

ՍԵԴ. Ըսէ՛ք՝ կանանց կապրի՛ղը։ Դժգոհ դուրս։

*

ՄՈՒՇ. Այսօր հիանալի էք տրամադրուած։

ԱԶՆ. եղբօրը կը հետևի աչքով՝ և յանկարծ ետ դառնալով՝ ձայնը փոխուած, ինծի՛ լսեցէք, պարոն Մուշեղ, եթէ ձեր կեանքը ձեզի թանկ է, եթէ ձեր ընտանիքի կեանքը ձեզի թանկ է, կ՚աղաչեմ ձեզի, կը պաղատիմ, թողէ՛ք Պոլիսը, որչափ կարող էք շուտ. թողէ՛ք Պոլիսը, հեռացէ՛ք, հեռացէ՛ք։

ՄՈՒՇ. բոլորովին մռայլ հանդարտ ելած է ոտքի։ Եւ ինչո՞ւ։

ԱԶՆ. Ինչուն ես ի՛նքս ալ որոշ չգիտեմ, միայն հեռացէ՛ք։ Նախազգացումս ինծի կ՚ըսէ, որ յանկարծ դժբաղդութիւն մը կը բերէ ձեր գլխուն ալ, ուրիշներուն ալ։ Հեռացէ՛ք։

ՄՈՒՇ. Ձեր եղբօր ըսելի՞քն ալ ատիկա է։

ԱԶՆ. Զգիտե՛մ, ես ոչինչ չգիտեմ. ես բոլորովին ինծմէ է, որ կը խօսիմ։ Եւ եղբօրս ո՛չ մի խօսք այս մասին։ Ես... ես...

*

ՍԵԴ. ժպտուն։ Ահա՜ և սիկառը։ Խնդրե՛մ։ Դէ՜, Աղնի՛ւ, հիմա կարծեմ այլևս...

ՄՈՒՇ. Քանի որ ձեր եղբայրը կը պնդէ, թողէ՛ք, օրիորդ, թողէ՛ք մեզի վայրկեան մը առանձին։

ԱԶՆ. Բայց...

ՄՈՒՇ. Հանդիստ ու հանգստացնող շեղտով մը։ Թողէ՛ք, օրիորդ, թողէ՛ք։ Աղնիւ ուսերը ցընցելով կ՚ելնէ դուրս։

*

ՄՈՒՇ. Հետաքրքիր եմ, թէ ինչ եմ լսելու։

ՍԵԴ. Գիտէ՞ք, մեր այս վերջին իրարու հանդրպիլը իմ վրաս խիստ ազդած է, ու երկար մտածելու նիւթ ուած։

ՄՈՒՇ. Ե՛ս ալ ձեր վրա եմ մտածեր։

ՍԵԴ. Ուրեմն աւելի լաւ։ Եւ ես հասա այն եզրակացութեան, որ կամքի տէր մարդ մըն էք դուք, կեանքի չարն ու բարին հասկցող և որ ձեր արդի հակառակ բանակին մէջ ինկած ըլլալը տեսակ մը ծախորդ դիպուած է միայն։

ՄՈՒՇ. Հակառակ բանակի։

ՍԵԴ. Ուր ամէնէն աւելի դուք ինքներդ էք տանջուողը։

ՄՈՒՇ. զուսպ։ Եւ հիմա ձեր ըսելի՞քը։

ՍԵԴ. Ըսելիքս... շատ պարզ։ Պէտք է միայն ձեր կողմէն քայլ մը, ձեր խղճի ձեղի թելադրած վսեմ քայլը, և դուք կրնաք ամէն բան իր բնական վիճակին դարձներ։ Այդ տեսակ քայլը անվախ ու կարուկ բնաւորութիւնները միայն կրնան ըներ. դուք կրնա՞ք ըներ. դուք պարտակա՞ն էք ընելու։

ՄՈՒՇ. Եւ այդ քա՞յլն է։

ՍԵԴ. Համոզած։ Անցնի՛լ մեր բանակը։ Ակնթարթ մը լուռ։ Մե՛ր, ժողովուրդի բանակը, ազգայի՛ն բանակը, այսինքն հոն, ուր դուք կը պատկանիք, ուր եղած էք երբեմն և որ թողած էք... մարդկային բնական տկարութեամբ։ Ես գիտե՛մ. նախ, երևի, նեղեցին ձեզի բանդին մէջ, վերջապէս մարդ էք, կեանքի սէրը միշտ կա։ Վերջն ալ զայրացուցին ձեզի, զրդռեցին, ստիպեցին։ Ես համոզուած եմ. թէ չէ՝ ինչո՞ւ համար ձեր խելքի տէր մէկը ստոր փաշայի մը ձեռքը գործիք պիտի դառնար. զրամի համար. չե՛մ հաւատար։ Ճիպրու բան է դա, ուրիշ ոչի՛նչ։ Չէ՞։

ՄՈՒՇ. Աւարտեցէ՛ք, աւարտեցէ՛ք։

ՍԵԴ. Հիմա իմ առաջարկս սա՛ է։ Դուք արտաքուստ կը մնաք այն, ինչ որ էք, կը պահէք ոստիկանատան հետ ձեր բոլոր կապերը, մինչև անգամ, եթէ կ՚ուզէք, ցոյց աւէ՛ք քիչ մը աւելի ջերմեռանդութիւն։ Մինչդեռ ներքուստ, ա՜յ, կ՚աշխատիք գործերը խճճելու, կարևոր թղթերը ձեռք բերելու, մեզի տեղեակ պահելու, կը հասկնա՞ք։ Մէկ խօսքով՝ կ՚ըլլաք ամենախոշոր ուժ մը, սատար մը մեր ազգի ազատութեան գործին։

ՄՈՒՇ. շրթունքները կծելով։ Այդպէս, ազատութեան գործի՛ն։

ՍԵԴ. Իսկ երբ ձեր գիրքը սկսի կասկած յարուցանելու, ձեզի իսկոյն կ'անցնենք սահմանը։

ՄՈՒՇ. միշտ իր զայրոյթը հազիւ զսպելով։ Կ'անցնէք սահմանը։

ՍԵԴ. Բնականաբար։

ՄՈՒՇ. Ըսէ՛ք, խնդրե՛մ, ի՞նչը առիթ տուաւ ձեզի այս առաջարկութիւնը հիմա ինձի ընելու։

ՍԵԴ. Ի՞նչպէս թէ ինչը։ Մանաւորապէս՝ ոչի՛նչ։

ՄՈՒՇ. Իսկ ես վախցա, թէ որևէ սպառնալիք մը, բան մը լսած էք ինձի դէմ։

ՍԵԴ. Գիտե՛մ, որ ժողովուրդին մէջ վատ տրամադրութիւն մը կա դէպի ձեզ։ Վերջապէս շատ զարմանալու չէք, որ ձեր արդի գիրքը այնչափ ալ ախորժելի չէ ժողովուրդին։

ՄՈՒՇ. Իսկ ուրիշ ոչի՞նչ։

ՍԵԴ. Ուրիշ ի՞նչ։

ՄՈՒՇ. Ուրեմն ուրիշ ոչի՞նչ։

ՍԵԴ. Կարծեմ, բաւական բիչ բան չէ։ Աչքի առաջ ունեցէք, որ վիրաւորուած զգացմունքներն ու այրուած մարդիկը շատ երկար մտածելու սովոր չեն։

ՄՈՒՇ. Այո՛, այրուած մարդիկը...

ՍԵԴ. Այնպէս որ իմ բաւական միակ աղնիւ ու շիտակ ճամբան է այդ ժուռ դրութենէն դուրս գալու ու հին սխալները մաքրելու։ Քիչ մը խորհեցէ՛ք ու պիտի համոզուիք։

ՄՈՒՇ. որ պահ մը խոր իր մտքերուն մէջն էր թաղուած։ Գիտէ՞ք ինչ. ես... կ'ուզէի այս մասին դեռ ձեզի հետ խօսիմ, բայց հիմա... հոս քիչ անյարմար է, ժամանակ ալ չունիմ երկար մնալու։ Եկէ՛ք ինձի, խօսինք աւելի հանգամանօրէն. նշանակեցէ՛ք ժամ մը, երբ որ կամենաք. կ'ուզէ՞ք վաղը։

ՍԵԴ. վախով։ Վաղը։ Ո՛չ, ո՛չ. ինչո՞ւ. եթէ այդպէս է կու գամ այսօր, հէնց այսօր, իրիկունը։ Այս տեսակ խնդիրները որչափ շուտ, այնքան լաւ։ Մէկ ալ որ իմ բնաւորութիւնս է, չեմ հանդուրժեր մինչև որ միտքս դրածը չտարտի։ Լաւ է այսօր, այսօր։

ՄՈՒՇ. շեշտ տալն դիտելով։ Աղէկ, քանի որ այդպէս կը շտապէք... Իմ բրոչս տարդը կը ճանչնա՞ք, չէ՞, Աբրահամը, Մանուկեան։ Անոնց տունը հոս, ձեր թաղն է. իրիկուան դէմ ես հոն եմ ըլլալու. կը սպասեմ ձեզի. այո՛. բայց կը սպասե՛մ։

ՍԵԴ. Ա՜, անպայման։

ՄՈՒՇ. Ուրեմն առայժմ...

ՍԵԴ. Իսկ դուք մտածեցէ՛ք։

ՄՈՒՇ. Կը մտածե՛նք, կը մտածե՛նք, միասի՛ն։ Երկուքով դուրս։

*

Միւս դռնէն իսկոյն ներս կը մտնէ Աշնիւ, յուզած և ուժասպառ կ'երթա կ'ելնա բազկաթոռին մէջ. քիչ մը վերջը ուրախ ներս կը նետուի Սեդրակ։

ՍԵԴ. Դուն հոս ես։

Ա.ՋՆ. կը նետուի եղբօրը դէմը ու անոր ձեռքը խլելով։ Սեդրակ, եթէ ինձի կը խղճաս, եթէ կը մեղքնաս մայրիկը, եթէ քեզի համար բան մը սուրբ է աշխարհիս երեսին՝ մի՛ գնար, մի՛ գնար այս իրիկուն Մուշեղին։

ՍԵԴ. որ առաջ ապշած էր, վերջի բառերուն ձեռքը ետ կը քաշէ զայրոյթով։ Ի՞նչ. մատովը աղջկա ելած դուռը ցոյց տալով. ուրե՛մն...

Ա.ՋՆ. Մի՛ գնար, Սեդրակ. կ'աղաչեմ քեզի. լացկոտ։

ՍԵԴ. Սա ի՞նչ նորութիւններ են։ Հանգստացի՛ր, հանգստացի՛ր։

Ա.ՋՆ. ուրախացած ու եղբօր վիզը փաթաթելով։ Ուրեմն չես երթար, հա։ Խօսք տուր, խօսք տուր։

ՍԵԴ. մեղմ ու խոժոռ։ Դուն չգիտե՞ս թէ ինչ կը խնդրես։

Ա.ՋՆ. Իմ սիրտս կ'ըսէ ինձի, իմ զգացումներս ինձի կ'ըսեն. մի՛ գնար։

ՍԵԴ. նեղսիրտ։ Բայց ինչո՞ւ է, ինչո՞ւ։ Կնկա յիմար նախազգացումներ։

Ա.ՋՆ. Սեդրակ, հոգի՛ս, կեանքս, վատ է, վատ, վատ... Գնա գալ շաբթու, գնա ուրի՛շ օր մը, բայց ո՛չ այս իրիկուն։

ՍԵԴ. թևերը ազատել ջանալով։ Թող գա՛, ինչ որ գալու է։ Ժամանակ չկա սպասելու. ու ցաւութիւն է, եթէ չի գնամ։ Թո՛ղ. ուժով կը խլի անոր ձեռքէն, քիչ կը հրէ ետ, ու ինքը դուրս։

Աշնիւ ծանր ծանր կ'իյնա նորէն բազկաթոռին մէջ, ձեռքերովը դէմքը կը գոցէ ու կը սկսի անձայն հեկեկալու։

*

ՉՈՐՐՈՐԴ ԱՐԱՐ

Պարզ ու փոքր սենեակ մը. խառնակ, աղբատ կահաւորում։ Իրիկուան դէմ։

Ա. ՏԵՍԱՐԱՆ

Նախ սենեակը մարդ չկա. կը մտնին Տանտիկինն ու Մուշեղը։

ՄՈՒՇ. Հոբս-դին Նայելով։ Մարդդ տունը չէ՞։

ԿԻՆԸ. Աբրահամը։ Տունն է։

ՄՈՒՇ. Գնա՛ կանչէ։

ԿԻՆԸ. Վարը պարտէզն է. աղջիկներն ալ հոն են։ Դուն ինչու այսչափ ուշացար. ըսիր՝ շուտով գալու եմ։

ՄՈՒՇ. մտամոլոր։ Հրմ։

ԿԻՆԸ. Ինչպէ՞ս թէ «հրմ»։

ՄՈՒՇ. Հոս ինծի հարցնող չեղաւ։

ԿԻՆԸ. Զէ՞։

ՄՈՒՇ. Այնպէս երիտասարդ տղա մը, սուր մօրուքով։

ԿԻՆԸ. Զէ՛. ոչ օք։ Ի՞նչ կա որ։ Քիթդ բերանդ ինչու՞ ես կախեր։

ՄՈՒՇ. Գնա Աբրահամը վեր կանչէ։

ԿԻՆԸ. Էէ՞. ճաշի ատեն այնպէս քէֆդ տեղն էր, ուրախ զուարթ։ Ո՞վ գիտէ՝ ինչ խենթ բանի վրա նորէն բարկացեր ես։ Արժէ՞։ Քէֆդ նայէ՛, մարդ Աստծու. աշխարհքը փուճ է, փուճ. վաղը միւս օրը մեռնի՛ս պիտի։

ՄՈՒՇ. խայթուած։ Ի՞նչ։

ԿԻՆԸ. Դէ՞, իհարկէ՛, ո՞վ է ասաելացի. մեռնինք պիտի ամենքս ալ։

ՄՈՒՇ. Մէ՛, ամե՛նքս ալ։

ԿԻՆԸ. խնդալով։ Երևի, չես հաւատար, հա՞, որ մեռնիս պիտի։

ՄՈՒՇ. նեղսիրտ։ Դէ՞, թող, իսկի Աստծու, այդ դատարկ փիլիսոփայութիւնդ։

ԿԻՆԸ. Ինչու՞ կը նեղանաս։ Շիտակը խօսելով՝ իմ հաւատալս ալ չի գար։ Ֆո՛ւ, շատ անպիտան բան է. հոն, հողին տակը, թաց, մութ, որդե՛ր, գազաղը, ֆո՛ւ, ֆո՛ւ, ֆո՛ւ։

ՄՈՒՇ. պոռալով։ Դէ՞, հերիք է. յիմարութիւն պէտք չէ։ Գնա՛, գնա՛ Աբրահամը զրկէ՛ ինծի։

ԿԻՆԸ. ձեռքը թափ տալով։ Երթամ, երթամ։ Քա՛, այս մեռնելու խօսքն ալ ուրկէ մէջ ինկաւ։ Դուրս։

*

Մուշեղ կեցած է անշարժ, շրթունքը խածած, աչքերը դետին, խոժոռ ու լարուած։

ԱԲՐ. մտնելով։ Երբ ես վերադարձեր, որ ես չիմացայ։ Ի՞նչ է պատահեր. ինչո՞ւ ես այդպէս բարկացած։

ՄՈՒՇ. ծանր ծանր կաշկանդումէն կ'աղատի ու կարծես ինքն իրեն։ Այսպէս ուրեմն վճռեր են որ ես լրտես մրն եմ։ Լա՛ւ։ Մինչև հիմա մատնիչ մրն էի, հիմա ալ լրտես մը։ Լա՛ւ։

ԱԲՐ. Ատ ո՞վ։ Բայց յանցանքը քուկդ է։ Քանի անգամ ըսեր եմ քեզի, որ քիչ մը զգուշ ըլլաս. ի՞նչ հարկ կա այդպէս ազատ ու աշկարա փաշային մօտը կ'երթաս ու կու գաս։

ՄՈՒՇ. խեթ։ Հապա ի՞նչպէս. գնամ գողի՞ պէս։

ԱԲՐ. Ամենևին որ չերթաս, իհարկէ՛, ամենէն աղէկ, բայց որ կարելի չէ՛։ Քանի որ շարունակ կը հասկցնէ որ շուտ շուտ հանդրպիս, քանի որ օձիկդ չի թողներ։ Գոնէ այնպէս ըրէ՛, որ շատ չի նկատուի։

ՄՈՒՇ. Ինչո՞ւ. ամբարտաւան. ես հասարակութեան կարծիքը հարցնելու սովորութիւն չե՛մ ունեցեր, ոչ ալ անոր բարեհաճ թոյլտուութիւնը խնդրելու՝ իմ ըրածիս ու թողածիս համար։ Ես գիտե՛մ իմ գործս, ու իմ դատաւորս ես ի՛նքս եմ։

ԱԲՐ. Բայց ի՞նչ է պատահեր որ։

ՄՈՒՇ. Պատահածը... դեռ ինքս ալ որոշ չգիտեմ. բայց հիմա կը տուզե՛մ, իսկոյն։

ԱԲՐ. Բան մրն ես լսեր։

ՄՈՒՇ. Ինծի՛ նայէ. շուտով հոս է գալու Սեդրակը, ան, Մինասեանները. ակնթարթ մը լուռ։ Գալուն պէս, կ'երթաս կ'երթաս հոս, ձեր պահականոցը. ես իրենց մեծին հետ խօսեր եմ արդէն։ Անիկա քեզի երկու ոստիկան կու տա. կ'առնես կու գաս, հոս, դիմացի սրճարանը, կը նստի՛ս ու կը սպասե՛ս։

ԱԲՐ. Էէ՞, եաքի։ Մի՞թէ դիմ ինչ է։

ՄՈՒՇ. Ես յոյս ունիմ որ այս բոլոր պատրաստութեան պէտք չենք ունենար, յոյս ունիմ որ անիկա ամեն բան կը պատմէ ինծի, կը պատմէ։ Բայց վերջապէս, ո՞վ գիտէ, եթէ կամքովը չըսաւ, ես

կը սարսափե՛մ որ լեզուն բանա. երդիծանքով. Չէ՞ որ ես մատնիչ մը եմ։ Աղէ՛կ, ըլլանք մատնիչ մը։

ԱԲՐ. Պէ՛, մարդ, պարզ խօսէ, ես ալ բան հասկնամ։

ՄՈՒՇ. Դուն լսէ՛, ինչ որ կ'ըսեմ քեզի։ Ուրեմն... եթէ Սեդրակը ինծի հետ միասին տունէն դուրս գա, բնաւ չես երևար ու ոստիկանները ճամբու կը դնես. իսկ եթէ... դուրսէն բրբիջ. Մուշեղ ականջ կը դնէ։

ԱԲՐ. Աղջիկնե՛րն են։

ՄՈՒՇ. Իսկ եթէ տեսար՝ որ անիկա առանձին դուրս եկաւ, այն ատեն... այն ատեն դէմը կ'ուղարկես ոստիկանները և իսկոյն ձերբակալել կու տաս. երդիծանքով։ Չէ՞ որ ես լրտես մը եմ։ Լա՛ւ. կատղած. տեսնե՛նք, լեզուդ կը բանա՞ս, թէ ոչ։

*

Կը մտնեն Թև Թևի՝ Սրբուհին մելամաղձոտ ու Արաքսին, որ կը քրքջա։

ՍՐԲ. Է՜, ձգէ՛. Թևը բաշելով դուն արդէն խնդալ գիտես միայն։

ԱՐԱՔ. Ըհը՛, մօրեղբայրս եկեր է։

ՍՐԲ. Աչքդ լոյս. հանգստացա՞ր։

ԱՐԱՔ. Զերթա՞նք, մօրեղբայր. ժամանակ է կարծեմ։

ՄՈՒՇ. Հի՛մա, հի՛մա. քիչ սպասէ։

ԱԲՐԱ. Կ'երթաս, աղջի՛կ, կ'երթաս։ Շտապե՞լդ ինչ է։

ՄՈՒՇ. չորսդին նայելով։ Քու մօտդ թուղթ ու գրիչ չի՞ ճարուիր։

ԱԲՐ. Ի՞նչպէս չէ. ներսը պատուհանին մէջ. ա՜յ։ Դուրս. եռևէն և Մուշեղ։

*

Արաքսի կը փութի բազմոցին ու խորունկ յօրանջ։

ՍՐԲ. Ո՜ւհ, ի՞նչ ալ խեղդուած օդ է հոս. մարդու սիրտը աւելի կը սեղմուի. տխուր։ Ա՜խ...

ԱՐԱՔ. Ինծի նայէ՛, յիմար, մե՛ղք է, մե՛ղք այդ ապուշ ադոյ համար սիրտ հատցնելը։ Ո՛չ մտմտա, ո՛չ ուշ դարձուր։ Ընդհակառակը. նոյնիսկ եթէ գա ու առջևդ ծունկ չոքի՝ նորէ՛ն երեսը մի նայիր. իրը թէ առջևը չոքածին հետը խօսելով։ Ի՞նչ կը կամենաք, պարո՛ն. ինչո՞ւ էք չոքեր. խնդրե՛մ, խնդրե՛մ, կրնաք ոտքի ելներ. մեղք է, վարտիկիդ ծունկերը կը մաշի. բնական ձայնով։ Ատոնց հախէն այսպէ՛ս կու դան։

ՍՐԲ. Է՜, կ'ըսե՛ս։ Վերջապէս ամենքը քեզի պէս չեն։

ԱՐԱՔ. Ան ատեն նստէ՛ ու լաց, յիմարի պէս։

*

Կը մտնեն Տանտիկինն ու Սեդրակ։ Արաքսի տեսածին պէս բացականչութիւն մը կ'արձակէ ու նստած տեղը բարացած կը մնա։ Տղուն ալ զարմանք։

ԿԻՆԸ. Հրամեցէ՛ք, նստեցէ՛ք, այս վայրկեանիս։ Աղջիկնե՛ր, վազեցէ՛ք իմաց աւէք Մուշեղին, որ հիւրը եկեր է։ Սրբուհի դուրս.

*

ԿԻՆԸ Նստեցէ՛ք, խնդրեմ։ Իսկոյն, իսկոյն։

ՍԵԴ. կը մօտենա ու ձեռք մեկնելով Արաքսիին։ Ես բնաւ չէի սպասեր ձեզի հոս հանդիպելու։

ԱՐԱՔ. Այո. մարդուս կը պատահին այդ տեսակ դժբաղդութիւններ։

ՍԵԴ. ժպտելով։ Ինչպէ՞ս թէ։

ԿԻՆԸ Դուրս։

*

ԱՐԱՔ. Դուք... իհարկէ դուք... յանկարծ. ըսէ՛ք խնդրեմ, միայն անկե՛ղծ, պարզ։ Այն... մեր առաջին հանդիպումէն իվեր ինծի նորէն տեսնելու ցանկութիւնը չունեցա՞ք։

ՍԵԴ. ծիծաղ։ Մ՜յ, ձեզի հարց։

ԱՐԱՔ. Ո՛չ, ո՛չ, խնդրեմ, առանց խոյս տալու։ Այո՞, թէ ո՞չ։

ՍԵԴ. պարզ։ Այո։

ԱՐԱՔ. Ինչո՞ւ չեկաք ուրեմն։

ՍԵԴ. Ի՞նչ ըսեմ։ Գործե՛ր, զբաղո՛ւմ. չի յարմարեցա՛։

ԱՐԱՔ. Չի յարմարեցա՞։ Լա՛ւ, շնորհակալ եմ։ Եւ իհարկէ ասկէ եարն ալ նոյնպէս յարմարելիք չունի։

ՍԵԴ. Ինչո՞ւ։ Ցանկարծ ջերմ Ո՛չ։ Ասկէ եարը... ասկէ եարը յոյս ունիմ ընդհակառակը։

ԱՐԱՔ. Մի՞թէ։

ՍԵԴ. Այո՛, այո՛։ Հիմա ամեն բան այլ կերպ է դառնալու։

ԱՐԱՔ. Այսինքն ի՞նչպէս. չեմ հասկնար ձեր լեզուն։

ՍԵԴ. ուրախ. Տէ՛ք ձեռքերնիդ։

ԱՐԱՔ. Ո՛չ։ Նախ խօսք աւէք, որ վաղը իրիկուն անպատճառ մեզի պիտի գաք։

ՍԵԴ. Վա՞ղը...

ԱՐԱՔ. Նորէն կը վարանիք։

ՍԵԴ. ցրիւ։ Վա՞ղը... այո՛... արդէ՛ն...

ԱՐԱՔ. Ուրեմն կը խոստանա՞ք. վաղը իրիկո՛ւն։ Ձեռքը կու տա։

*

Կը մտնեն Տանտիկինը, Աբրահամ, Մուշեղ։

ՄՈՒՇ. ուրախ դէմ գալով։ Ա՜յ, կը սպասէի։

ՍԵԴ. Կարծեմ չուշացա։

ՄՈՒՇ. Օ՜, ոչ։

ԱԲՐ. Շատ ուրախ եմ, տղաս, որ պատիւ ըրիք ինծի իմ տանս մէջ. յուզած։ Նստեցէք, խնդրեմ. վարուեցէք ինչպէս ձեր սեփական տանը. իսկ ինծի կը ներէք. քիչ մը գործ ունիմ։

ՍԵԴ. Խնդրե՛մ, իմ պատճառովս ամենևին անհանգիստ չըլլաք։ Պարոն Մուշեղի հետ քիչ մը խօսելիք ունինք. ուրիշ ոչի՛նչ։

ԱԲՐ. Մուշեղին՝ վարանելով։ Ուրեմն... ես երթամ։

ՄՈՒՇ. կտրուկ։ Այո՛։

Աբրահամ դէպի դուռը։

ՄՈՒՇ. Բայց չըլլա թէ մոռնաս։ Հատիկ-հատիկ։ Միայն այն ժամանակ, եթէ առանձին ըլլա. առանձի՛ն։

Աբրահամ դուրս։

*

ԱՐԱՔ. Դուն առաջուց գիտէիր, որ պարոն Սեդրակը գալու էր։

ՄՈՒՇ. Այո՛։

ԱՐԱՔ. Հապա ինչո՞ւ ինծի բան չըսիր։

ՄՈՒՇ. Ի՞նչ։ Հիմա, սիրունի՛կս, դուն մեզի վայրկեան մը առանձի՛ն թող։ Գործ ունինք։

ԱՐԱՔ. Է՜, բա՜ն չունիս։ Ի՞նչ գործի ժամանակ է հիմա։

ՄՈՒՇ. Թող որ շուտով վերջացնենք։ Պարոն Սեդրակի ճամբան ալ բաւական տեղ մեզի հետ է. կ'երթանք միասին։

ԱՐԱՔ. Այո՞։ Կու գա՞ք միասին։

ՍԵԴ. Ամենայն սիրով։

ԿԻՆԸ. Քալէ՛, աղջի՛կս։ Սրբուհին ալ մինակ է։

ԱՐԱՔ. դժգոհ։ Բայց քիչ մը կարճ կապեցէք գոնէ։ Դուրս կնոջ եաւէն։

*

Բ. ՏԵՍԱՐԱՆ

Մուշեղ կ'երթա կը փակէ դուռը. կու գա աթոռ մը կը հրամցնէ. կը նստին դէմ դէմի։

ՄՈՒՇ. Ուրե՞մն։

ՍԵԴ. ժպտուն։ Խօսելու կարգը հիմա ձերն է։ Այսինքն երկար խօսելու իսկապէս ոչինչ չկա։ Առաջարկածս այն է, ինչ որ դուք ձեր միայնակ վայրկեաններուն անշուշտ արդէն շատ շատ անգամ խորհած էք և ուզած։ Այդ տեսակ քայլերու սկիզբն է դժուարը, կապ մը գտնե՛լը։ Ահա՜ ես պատրաստ եմ ձեզի այդ կապը դառնալու։

ՄՈՒՇ. Բայց... ես քիչ մտածեցի՝ ձեր կասկածները բոլորովին անտեղի են։

ՍԵԴ. Ի՞նչ կասկած։

ՄՈՒՇ. Իմ վրաս ոչ ոք ձեռք բարձրացնելու չի՛ համարձակիր։

ՍԵԴ. պաղ։ Ես ատիկա չդիտեմ. ատոր մասին ես ձեզի ոչինչ չեմ խօսած։

ՄՈՒՇ. Եւ իզո՞ւր։ Դուք բան մը գիտէ՛ք։ Խօսեցէ՛ք պարզ, որ ես ալ գիտնամ բռնելիք ճամբաս։

ՍԵԴ. քիչ կը մտածէ ու յանկարծ վճռական։ Աղէ՛կ, եթէ այդպէս է... Դուք անգամ մը ազատեցիք ինծի, հիմա ալ ե՛ս կը ցանկամ ազատեմ ձեզի։ Այդպէս թեթև մի՛ վերաբերուիք։ Ես հաստատ աղբիւրէ տեղեակ եմ, որ արդէն վճռուած է ձեր մահը։

ՄՈՒՇ. ամբողջ մարմնով կ'ուղղի նստած տեղը. սպրդնած, բայց հանգիստ։ Կը տեսնէ՞ք, խնդրի հետաքրքիր կողմը թողած, դուք ինծի փիլիսոփայական բաներու մասին կը խօսէիք։

ՍԵԴ. Ի՞նչպէս թէ փիլիսոփայական։

ՄՈՒՇ. Եւ շա՞տ ժամանակ է, որ «վճռուած» է։

ՍԵԴ. Է՜, ատոնք երկրորդական դատարկ հարցեր են։

ՄՈՒՇ. Ո՛չ, ինչո՞ւ երկրորդական։ Իսկ ի՞նչ կերպով են մտադիր իրենց վճիռը գլուխ հանելու։ Երևի ատիկա ալ կ'իմանաք։

ՍԵԴ. Այդ տեսակ հարցերու ես չեմ կրնար պատասխաններ։ Դուք շեղուեցաք մեր խօսքէն։

ՄՈՒՇ. Ինչո՞ւ։ Ըսենք՝ ճի՛շտ է. այդ բոլորի մասին կարելի է և վերջը։ Առայժմ ըսէ՛ք միայն՝ ո՞վ են ատոնք։

ՍԵԴ. ոտքի թռչելով։ Կը հասկնա՞ք՝ թէ ի՞նչ կը խօսիք։

ՄՈՒՇ. Է՜, բարեկամս, իզո՞ւր կը վրդովիք։ Ձեր այդ սիրալիր առաջին քայլէն ետքը, մենք պէտք է որ բոլորովին բաց խօսինք իրարու հետ։

ՍԵԴ. կտրուկ ու հպարտ։ Ես ըսի ձեզի՝ ինչ որ գիտէի։ Դուցէ աւելին քան պէտք էր։ Կարելի է միամտութիւն էր իմ կողմէս, բայց ես...

ՄՈՒՇ. Դատարկ բաներ են, բարեկամս, խօսի՛նք էականի մասին։

ՍԵԴ. ձեռքերը վճռական կրծքին ծալելով։ Հիմա ի՞նչ կ'ուզէք ինծմէ։

ՄՈՒՇ. Այդ... «հերոսներուն» անունները։

ՍԵԴ. Սա հրամանն է, թէ ի՞նչ։

ՄՈՒՇ. մեղմ։ Կը խնդրե՛մ, որ ըսէք։

ՍԵԴ. Եթէ չըսեմ։

ՄՈՒՇ. Դուք այնչափ խելացի էք, որ անշուշտ պիտի հասկնաք, թէ գիտնալը ինծի համար անհրաժեշտ է, և որ ես ստիպուած եմ ոչ

մէկ միջոցի դէմ կանգ չառնելու. ծիծաղելու։ Եւ վերջապէս միթէ դուք ձեր քրոջ չա՞փ ալ անկեղծ պիտի չըլլաք դէպի ինձի։

ՍԵԴ. Քո՞յրս, ի՞մ քոյրս։

ՄՈՒՇ. Այո՛, ձեր քոյրը. և խօսած է մանրամասն, անունով տեղով. ոչ թէ ձեզի պէս այդպէս միայն ակնարկներով։ Կը տեսնէ՛ք, որ ձեր ըսելիքը ինձի համար իսկապէս նորութիւն չէ։ Միայն կ'ուզէի ստուգեմ, որ աւելորդ տեղը սխալներ չի գործեին։

ՍԵԴ. մտածելով։ Մէ՛խ, ատիկա էր ուրեմն. յանկարծ։ Բայց անոր բոլոր խօսածները յիմար հնթադրութիւններ են միայն, որովհետև ան ոչ մի բան չգիտէ։ Անոր բոլոր վախը ան էր, որ գլխուս փորձանք մը չի գա, ուրիշ ոչինչ։ Ո՞վ գիտէ, ի՞նչ յիմարութիւններ է աւեր լեզին։ Մի՛ հաւատաք, մի՛, մի՛։

ՄՈՒՇ. սառն։ Պատրաստ եմ ձեզի լսելու. յայտնեցէ՛ք ճշմարիտը. թէ չէ՝ ակամա ստիպւած եմ անոր ցուցումներովը առաջնորդուելու. սուտ՝ իրա՛ւ. մեղքը իր վի՛զը։

ՍԵԴ. Աղէ՛կ։ Ես չեմ ուզեր ուրիշներու արիւնը մտնեմ. և վերջապէս ձեզի հետ բաց խօսիլը ամենէն ուղիղ ճամբան է հիմա։ Ես միայն կը զարմանամ, որ դուք ձեր ունեցած փորձառութեամբը մինչև հիմա չի կրցաք գուշակեր, թէ որու ձեռքէն է կախւած ձեր կեանքը։ Մէ՛կ մարդ մրն է անիկա, միայն մէ՛կ մարդ մը, որուն եւեր սակայն հարիւրաւորներ կան կեցած, որոնց վրա ձեր ձեռքը երբէ՛ք չի կրնար հասնիր, երբէ՛ք։ Իսկ այդ մէ՛կը...

ՄՈՒՇ. Այդ մէկը՞...

ՍԵԴ. Այդ մէկը... է՛ս եմ։

ՄՈՒՇ. կատաղի աչքերով։ Դո՞ւք։

ՍԵԴ. Հանդիստ։ Այո՛. է՛ս։

ՄՈՒՇ. Բայց դիտէ՞ք, որ ես կատակել չեմ սիրեր, երբ հարցը իմ մասին է։

ՍԵԴ. Ատիկա ինձի համար մի՛ւնոյն է։ Ե՛ս էի յանձն առեր, որ մէկ անդամէն ձեզի հետ մեր հաշիւները մաքրեմ. բայց գործը այնպէս դարձաւ որ ձեզի մօտիկ շփւեցա, աւելի մօտէն նայեցա ձեզի և սիրաս ինձի դրդեց, որ այլ կերպ ելք տամ գործին։ Հիմա ձեր ընելիքը ձեր ձեռքն է։ Խորհուրդ կու տամ ձեզի, որ ընդունիք առաջարկս. այդ գնով միայն կրնաք փրկւիր մահէն։ Եւ համոզւած եղէք, որ ձեր հաշիւներն ու վստահութիւնը սխալ են բոլորովին. վճիռը վերջնական է։ Միայն բաւած պայմանովս կարելի է փոխել. և ատոր մասին մտածողն ալ միայն ես եմ։

ՄՈՒՇ. Ա՛յդպէս։

ՍԵԴ. Հիմա կրնաք հասկնար, թէ ինչու այսպէս վստահ կը խօսիմ։

ՄՈՒՇ. Ուրիշ խօսքով՝ ըսել կ'ուզէք որ իմ կեանքս կախւած է ձեր կեանքի ապահովութենէն։

ՍԵԴ. Ատոր վրա այլ ևս ինքնե՛րդ մտածեցէք։

ՄՈՒՇ. Վերջացուցի՞ք։

ՍԵԴ. Այո՛։

ՄՈՒՇ. դուռը ցոյց տալով։ Ուրեմն այլ ևս չէի ցանկար ձեզի աւելի նեղութիւն պատճառեմ։

ՍԵԴ. զարմանքով։ Բայց... բայց... ուրեմն ոչինչ չունի՞ք ըսելու։

ՄՈՒՇ. Քանի որ կեանքս կախւած է ձեր կեանքի ապահովութենէն՝ պէտք է որ ձեզի շատ չի յոգնեցնեմ. մինչդեռ դուք, կը տեսնեմ, քիչ մը շատ շուտով կը բռնկիք։

ՍԵԴ. ուսերը ցնցելով։ Ցանցանքը իմս չէ՛, եթէ դուք ձեր դրութեան ծանրութիւնը լրջօրէն հասկնալ չէք ուզեր. քայլ մը դէպի դուռը, կանգ կ'առնէ վարանոտ։ Ես... ես բոլոր սրտովս կը ցանկայի փրկեմ ձեզի։

ՄՈՒՇ. զսպած կատաղութեամբ։ Դո՞ւք. փրկե՞ք. ինձի՞։

ՍԵԴ. Վերջին անգամ կը կրկնեմ, մի մերժէք առաջարկս։

ՄՈՒՇ. վռնտելով։ Գնացէ՛ք, գնացէ՛ք։

ՍԵԴ. Պարոն Մուշեղ, կ'աղաչե՛մ ձեզի, լսեցէ՛ք ինձի. մե՛ղք էք. դուք ալ, ե՛ս ալ։

ՄՈՒՇ. Մե՛ղք, հա՜, մե՛ղք։ Ուրեմն... ուրեմն այն նամակը բաղդի բերմամբ եթէ ձեռքս չիյնար, եթէ քեզի բերած չըլլայի, դուն արդէն հիմա իմ վրաս ձեռք վերուցած պիտի ըլլայիր. հա՜. արդէ՛ն, արդէ՛ն, դո՛ւն, դո՛ւն, որը ես այնպէս մեղքցա... Գնա՛, գնա՛, շո՛ւտ, ի՞նչ ես կեցեր, քանի որ այդքան մեծ հերոսութիւն ունիս դեռ կատարելիք։

ՍԵԴ. Կ'երթամ. հանդի՛ստ եղէք։ Դուք, իհարկէ, հիմա ինձի մատնէք պիտի. բայց հաւատացէ՛ք, որ դա կըլլա ձեր վերջի՛ն մատնութիւնը։

Դուրս։

*

Մուշեղ կեցած է վայրի դէմքով, բռունցքներն ու ատամները սեղմած, հայեացքը դռան։ Լուռ ու մենակ։ Անոր եռեի կողմն կողմակի դրոնով կը մտնէ Արաբսի ու զարմանքով կը նայի քիչ մը։

ԱՐԱՔ. Գնա՞ց. արդէն գնա՞ց։

ՄՈՒՇ. ընդոստ կը դառնա ետ. իրեն սանձելով։ Ի՞նչ։

ԱՐԱՔ. Պարոն Սեդրակը գնա՞ց։

ՄՈՒՇ. Հանդիստ ու ընդդծելով։ Այո՛. գնա՞ց։

ԱՐԱՔ. Բայց... ինչպէ՞ս թէ. առանձի՞ն։

ՄՈՒՇ. Այո՛. առանձի՛ն. խորհրդաւոր. առա՜ն ձի՛ն։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՐԱՐ

Ընդարձակ սենեակ մը. շատ քիչ կահեր։ Ճակատը՝ փողոց նայող երեք պատուհան. պատուհաններուն տակը երկար բազմոց։ Առատ դորգեր ու բարձեր։ Մուտքը աջէն ու ձախէն։

Ա. ՏԵՍԱՐԱՆ

Մուշեղ փռած է բազմոցին, ծխախոտի թանձր մուխի մէջ, մռայլ ակնապիշ։ Քիչ վերջը Ներս կը մտնէ Որբևայրին, նախ հեռուէն կը դիտէ լուռ, հանգիստ քայլերով կը մօտենա անոր՝ գլխին կողմէն. ու քիչ մըն ալ այդպէս դիտելէն վերջը։

ԱՑՐԻՆ. Դէ՞, հերիք է վերջապէս։

Մուշեղ ընդոստ վեր կը ցատկէ։

ԱՑՐԻ. Ինչո՞ւ այդպէս վախցար։

ՄՈՒՇ. Նորէն փռւելով։ Դո՞ւն ես։

ԱՑՐԻ. Հոգի՛դ սիրես, վերջապէս բառ մը ըսէ։ Ի՞նչ է ասիկա երէկ գիշերուընէ իվեր. քիթէդ իյնողը հազար կտոր կըլլա. ի՞նչ է պատահեր։

ՄՈՒՇ. Պատահե՞ր։ Ոչի՛նչ. ի՞նչ պիտի պատահի։ Ինձի իմ թոյլ վայրկեաններուս տեսան ու երես առին. ահա՜ բոլորը ինչ որ պատահեր է։

ԱՑՐԻ. Աա՜ ո՞վ։

ՄՈՒՇ. Երեխանե՞ր։

ԱՑՐԻ. Ո՞վ է որ ատիկա։

ՄՈՒՇ. Ո՞վ է. հրմ. որ կը մտածեմ կատղիլս կու գա. ես այնպէս խղճամ, այնպէս սրտանց հետը վարուիմ, և ան... ան ով գիտէ գիմացս նրսատած ինչե՞ր կը մտածէր այդ միջոցին... Դէ՞, գնա՛, գնա՛ ու հիմա մարդոց լաւութիւն ըրէ՛։

ԱՑՐԻ. Հապա. ես որ քեզի կ'ըսեմ։

*

Ցանկարծ ուժով կը բացվի ձախի դուռը։ Մուշեղ Նորէն ընդոստ վեր կը թռչի. կը մտնէ Արմենակ։

ՄՈՒՇ. Ի՞նչ է այսօր ամէնքդ ալ այդպէս յանկարծ. չե՞ս կրնար քիչ մը աւելի կամաց։

ԱՐՄ. Ներեցէ՛ք, էֆէնդի՛ս։

ԱՑՐԻ. Ծիծաղով։ Ձեզի ո՞վ բացաւ դուռը։

ԱՐՄ. Սրտագին բարեկամութեան ու խորին յարգանքի առջև դռները ինքնին կը բացուին, տիկի՛ն։

ՄՈՒՇ. Չը։ Ի՞նչ ունիս։

ԱՐՄ. Բերի գող Կոսղիի գործը. արտաղրած եմ բոլոր, միայն երկու կէտ կա, որու մասին ձեր կամքը կ'ուզէի իմանամ. նախ որ...

ՄՈՒՇ. Աղէ՛կ, աղէ՛կ. դեռ քիչ մը հանգստացի՛ր. վե՛րջը, նե՛րսը։

ԱՐՄ. Ինչպէս որ կը հրամայէք, էֆէնդի՛ս. տիկնոջ դառնալով։ Հա՛, ի՞նչ պիտի ըսէի։ Դուք կարծեմ Մինասեաններուն հետ քիչ մը ծանօթութիւն ունիք, չէ՞։

ԱՑՐԻ. Ո՞ը։

ԱՐՄ. Ա՛ն, որոնց տղան նոր դարձաւ Եւրոպայէն։

ԱՑՐԻ. Մ՞, այո՛. ինչպէս չէ։ Ի՞նչ կա որ։

ԱՐՄ. Այսօր իմացա, որ երէկ գիշեր ծերբակալեր են։ Եւ կ'ըսեն թէ շատ ծանր յանցանք կա վրան։

ԱՑՐԻ. Ի՞նչ կրսէք. խե՛ղճ տղա։ Վրայէն ատանկ բան չէր երևար։

ԱՐՄ. Է՞, տիկի՛ն, վրայէն պիտի չնայիլ. ժամանակները շատ են գէշցեր. դուրսէն որ կը նայիք՝ կարծես գառնուկներ ըլլան։ Այնպէս չէ՞, էֆէնդի՛ս։

ԱՑՐԻ. Մուշեղին։ Դուն բան գիտէի՞ր։ Ինչպէս է որ չըսիր մեզի։

ՄՈՒՇ. Յանկարծ ոտքի ելնելով Արմենակին։ Նա՜, երթանք ներս, մեր գործին։

ԱՐՄ. Ինչպէս որ կը հաճիք, էֆէնդի՛ս. միասին դուրս։

*

Որբևայրին կը վերցնէ կարի զամբիւղը, կը նստի բազմոցին։ Հազիւ է սկսած աշխատելու, որ կը մտնէ Արաքսի. ձեռքին ծաղկի փոքրիկ փունջ մը, որ կը կապէ. ներս մտնելուն պէս կը նայի պատի ժամացոյցին։

ԱՑՐԻ. Ի՞նչ այսօր քու աչքդ շարունակ ժամացոյցին է։

ԱՐԱՔ. Է՞, գիտեմ որ գալու չէ. ուսերը ցնցելով։ Հոգս։

ԱՑՐԻ. Աա՜ ո՞վ. չըլլա Սրբուհին։

ԱՐԱՔ. Նեղսիրա։ Զգիտե՞մ։ Կ'ուզէ գա, կ'ուզէ չի գա. բայց թէ որ չեկաւ... բարկացած կը կոխէ ծաղիկները բաժակի մը մէջ. յանկարծ։ Տե՛ս, ի՞նչ ապուոր վարդ է, մայրի՛կ. չէ՞. ծաղիկները դնելով սեղանին ու նորէն դառնալով ժամացոյցին։ Զէ՛. կու գա՛. խոստացա՛ւ...

ԱՑՐԻ. Քա՛, ո՞վ։

ԱՐԱՔ. Է՞, ո՞վ պիտի ըլլա. երէկ գիշեր չըսի՞ քեզի. Սեդրակը։

ԱՑՐԻ. Ի՞նչ Սեդրակ, խե՛ղթ. Սեդրակը ծերբակալեր են։

ԱՐԱՔ. ծաղրով։ Սեղրակը ի՞նչ են ըրեր։
ԱՅՐԻ. Ձերբակալեր են։
ԱՐԱՔ. ծաղրով։ Ո՞վ են ձերբակալեր։
ԱՅՐԻ. Քա՛, խո՞լ ես. Սեղրակը։
ԱՐԱՔ. բուռն ծիծաղով։ Ձերբակալե՞ր են, Սեղրա՞կը. ատ ե՞ր. երաղի՞դ մէջ։ Ձէ՞ որ դեռ երէկ իրիկուն...
ԱՅՐԻ. Է՜, ի՞նչ ընենք։ Գիշերը կոխեր են տունը։
ԱՐԱՔ. լրջանալով։ Գիշե՞ր... պահ մը քարացած, ու յանկարծ սարսափով կը նետուի դէպի աջ կողմի դուռը։ Մօրեղբա՛յր, մօրեղբա՛յր։
ԱՅՐԻ. վրա վազելով՝ կը բռնէ թևէն։ Քա՛, ի՞նչ եղաւ քեզի. թո՛ղ. անիկա գործ ունի։
ԱՐԱՔ. Է՜, ձդէ՛, ձդէ՛. շո՛ւտ։ Մօրեղբա՛յր, մօրեղբա՛յր։

*

ՄՈՒՇ. իր դռան մէջ։ Ի՞նչ է ան. ի՞նչ կա։
ԱՐԱՔ. դէմը վազելով։ Մօրեղբա՛յր, լսե՞ր ես, լսե՞ր ես։
ՄՈՒՇ. Ի՞նչը. ի՞նչ է եղեր քեզի։
ԱՐԱՔ. Ու Սեղրակը բռներ են։
ՄՈՒՇ. սառը. ետ վանելով։ Է՜, ի՞նչ ընենք. ատոր համար ես ձայնդ աշխարհը ձգեր։
ԱՐԱՔ. շտապ։ Բայց... բայց... բանդ են դրեր։
ՄՈՒՇ. խիստ։ Քեզի չի վերաբերող բաներուն մի՛ խառնուիր ու գնա՛ բանիդ։
ԱՅՐԻ. Շիտակ է, շիտա՛կ, աղջի՛կս, գնա՛ գործիդ։ Երեւի, բան մը ըրեր է. թէ չէ կառավարութիւնը ծրի հաց ունի կերցնելու։ Ալ վստահութիւն ըսած բանը չէ մնացեր աշխարհիս երեսին։ Հիմակւան ճահիլները բոլորն ալ անպէտք բաներ, բոլորն ալ. դուրս։

*

ԱՐԱՔ. որ մօրը խօսելու ատենը իր մտքերուն մէջ էր թաղուեր, յանկարծ թափ կու տա ինքզինքը։ Ա՜խ, սո՛ւտ է. անկարելի՛ բան։ Ձէ՞, մօրեղբա՛յր, սո՞ւտ է, չէ՞։ Ըսէ՛, դուն կ'իմանա՞ս. իրա՞ւ է։
ՄՈՒՇ. Այո՛, այո՛. վե՛րջ տուր միայն. գլուխս ցաւեցուր։
ԱՐԱՔ. Այո՞... Հանդիստ. է՜, ի՞նչ պիտի ընենք այն ատեն։ Ձէ՞ որ դուն մեծ մարդիկ կը ճանչնաս. ոստիկան փաշան ալ բարեկամդ։
ՄՈՒՇ. խոժոռ։ Էէ՞. եաքը։
ԱՐԱՔ. Մուշեղի վրա նետելով՝ աղաչանքով։ Մօրեղբա՛յրս, անդի՛ն մօրեղբա՛յրս։
ՄՈՒՇ. կը բռնէ անոր գլուխը ու նայելով շե՛շտ աչքերուն։ Ինձի նայէ՛, տեսնե՛մ։ Ի՞նչ գործ ունիս դուն այդ տղուն հետ. ետ հրելով ու գլխի ինկած. հրե՞. ա՛տ էր ուրեմն։

ԱՐԱՔ. կոտրուած։ Մօրեղբա՜յր...
ՄՈՒՇ. մռայլ։ Գնա՛, գնա՛, հեռացի՛ր։
ԱՐԱՔ. Ի՞նչ կըլլա, անգամ մը որ խօսիս փաշայիդ. ան քու խօսքդ չի կոտրեր։
ՄՈՒՇ. չար ու ակռաներուն մէջէն։ Գնա՛, կ'ըսեմ քեզի. դո՛ւրս. ու ալ չի համարձակի՛ս դիմացս բառ մը արտասանելու։

Արաքսի ակնթարթ մը կը նայի ապշած. դէմքը լացի կը ծամածռի. գլուխը կախ՝ կամաց կ'ելնէ դուրս։

*

ՄՈՒՇ. սեղմած ակռաներով քիչ կը նայի անոր ետեւէն. և ուժով մը ետ կը հրէ կից սենեակին դուռը։ Արմենա՛կ, Արմենա՛կ։
ԱՐՄ. Էֆէնդի՛ս։
ՄՈՒՇ. Քալէ՛ երթանք։ Ես քիչ գործ ունիմ։ Կը խօսինք ճամբին։
ԱՐՄ. Ինչպէս որ կը հրամայէք, էֆէնդի՛ս։ Իհարկէ, ճամբին ալ կրնանք խօսիր։
ՄՈՒՇ. որ կը մտածէր։ Դուն կարծեմ աղջի՞կ մը ունիս, չէ՞։
ԱՐՄ. Ո՛չ, էֆէնդի՛ս. երկու հատ։
ՄՈՒՇ. Երկո՞ւ. աւելի՛ դէշ։ Երեւի կը սիրե՞ս։
ԱՐՄ. Դէ՜, իհարկէ, էֆէնդի՛ս։
ՄՈՒՇ. Եւ ինչո՞ւ համար։
ԱՐՄ. Մարդ իր զաւակը...
ՄՈՒՇ. Որովհետեւ մարդ բաւածը տխմար է։ Գուցէ կը կարծես, որ աղջիկներդ ալ քեզի կը սիրեն. չիմա՛ր։ Բոլորը սո՛ւտ է, սուտ։ Բոլորը շողոքորթութիւն է միայն, բոլորը քծնանք ու հաշիւ։ Մէ՛կ սէր կա միայն, մէ՛կ, որը սուտ չէ, որ կեղծ չէ, և որու մասին ամէնքը կեղծաւորութեամբ կը լռեն. պինդ կրծքին զարնելով։ Ինքզինքի՛ն սէրը, ինքզինքի՛ն։ Ամե՛ն մարդ միայն ինքզինքն է որ կը սիրէ, կ'ուզէ ըլլա աղջի՛կդ, քո՛յրդ, եղբա՛յրդ, ազգականդ, ի՞նչ կ'ուզէ ըլլա։ Սո՛ւտ է, ուրիշը սիրել չկա՛. հասկցա՛ր։ Քալէ՛, քալէ՛ երթանք։

Կ'ուղղուի դէպի ձախ դուռը, ուրկէ արագ ներս կը նետուի Որբեւայրին իրար անցած։

*

ԱՅՐԻՆ. Մուշե՛ղ, Մուշե՛ղ. Միհասեանններուն Ազնի՛ւն է։
ՄՈՒՇ. սառը։ Ի՞նչ կ'ուզէ։
ԱՅՐԻ. Կրսէ՝ հետդ խօսի պիտի. երեւի, եղբօրը մասին։
ՄՈՒՇ. չար։ Ըսէ՛ որ տունը չեմ, ըսէ՛ որ... ընդհատելով։ Կեցի՛ր։

ԱՑՐԻ. Է՜, ի՞նչ կարիք կա. ապուր չի փախչիր։ Մէկ երկու խօսք ըրէ՛ ու ճամբու դի՛ր։

ՄՈՒՇ. մռայլ։ Թող գա։

Որբևայրին դուրս։

*

ՄՈՒՇ. Իսկ դուն կը սպասե՛ս մի երկու վայրկեան, չէ՞։ Նստէ՛ ներսի սենեակը. երկար չի քաշեր. քանի մը վայրկեան միայն։

ԱՐՄ. Ինչպէս որ կը հրամայէ՛ք, էֆէնդի՛ս։ Կը սպասե՛մ, ի՞նչ վնաս. դուք ձեր գործը տեսէք. կը մտնէ կից սենեակը։

*

Բ. ՏԵՍԱՐԱՆ

Որբևայրին կ'առաջնորդէ Աղնիւը ներս և ինքը խկոյն կամաց կ'ելնէ դուրս։ Աղնիւ վայրկեան մը կանգ կ'առնէ դռան մօտ՝ գլխարկի սև ու նուրբ քօղին տակէն դիմացինը դիտելով։ Մուշեղ ալ կեցած է տեսակ մը կուի պատրաստ, սպասողական դիրքով։ Քիչ լուռ։

ՄՈՒՇ. Խնդրե՛մ, օրիորդ. աթոռը մատնանիշ։ Ձեր կամքն է։

ԱՁՆ. Եղբայրս բանտն է, պարո՛ն Մուշեղ։

ՄՈՒՇ. Գիտե՛մ։

ԱՁՆ. Եւ երէկ իրիկուն, ձեզի դալէն անմիջապէս եաքը։

ՄՈՒՇ. Գիտե՛մ։

ԱՁՆ. Եւ կ'ըսեն, իբրև թէ ձեր մասը կա մէջը։

ՄՈՒՇ. Ճի՛շտ է։

ԱՁՆ. Ճի՞շտ է։

Մուշեղ գլխով կընէ։

ԱՁՆ. Ուրեմն... ուրեմն... Բայց ինչո՞ւ։

ՄՈՒՇ. Ինչո՞ւ. դեռ կը հարցնէ՞ք։ Դուք փոխանակ երէկ ինձի խորհուրդ տալու որ Պոլսէն հեռանամ, այդ խորհուրդը դուք վաղուց ձեր եղբօրը տալու էիք, որ պահին տակէն իր բարեբարի կեանքին դէմ դարան չի լարէ։

ԱՁՆ. Սո՛ւտ է. իմ եղբայրս մարդասպան չէ՛։

ՄՈՒՇ. Այսինքն ինքը անձամբ, իհարկէ՛, հապա թէ այդչափ քաջութիւն ունենար. բայց կան և ուրիշի ձեռքով մարդասպաններ, և ատոնք ամենաղզելիներն են. ձեր եղբայրը ատոնցմէ է։

ԱՁՆ. որ անթարթ կը նայէր անոր, յանկարծ կը նետուի ոտքերը։ Մի՛ հաւատաք, մի՛ հաւատաք։ Ձեր ոտքերն ինկած կ'աղաչեմ ձեզի, կը խնդրեմ ձեզի, մի՛ ընէք, պարո՛ն Մուշեղ, մի՛ ընէք։ Խնայեցէ՛ք դոնէ մօրս, խնայեցէք մեր հին բարեկամութեանը. միթէ այդ բոլորը ձեզի համար ոչ մի նշանակութիւն չունի։

ՄՈՒՇ. Ելէ՛ք, ելէ՛ք ոտքի։ Մեղալրեցէ՛ք ձեր եղբայրը։ Իր մեղքը իր վիզը։

ԱՁՆ. Լա՛ւ. ան թող մեղաւոր ըլլա. բայց մե՞նք. մտածեցէ՛ք մեզի, մտածեցէ՛ք ինձի. դոնէ ինձի՛ համար, պարոն Մուշե՛ղ, դոնէ ինձի համար. լալով։ Վերջապէս պարտականէ՞ք մտածելու, վերջապէս իրաւունք չունի՞ք իմ կեանքս այսպէս խորտակելու. և ասիկա արդէն երկրորդ անգամ, երկրորդ։

ՄՈՒՇ. Ելէ՛ք, օրիորդ. ելէ՛ք, խնդրեմ. կը բարձրացնէ թևէն ու կը նստեցնէ բազմոցին։ Ի՞նչ ըսել կ'ուզէք, օրիորդ...

Աղնիւ դէմքը ծածկած կու լա։

ՄՈՒՇ. Ինչպէ՞ս թէ երկրորդ անգամ. ես ձեզի ի՞նչ եմ ըրեր. ե՞ր։

ԱՁՆ. յանկարծ, կրքոտ, տարուած. դէմքը բանալով։ Դուք, դուք. ոչի՛նչ. ամենևի՛ն։ Ձեզի համար ի՞նչ. ծղեցի՛ք, ելաք գացի՛ք. ձեզի՞ ինչ, ձեզի ի՞նչ, որ կնոջ մը կեանքը, բաղդը, երիտասարդութի՛ւնը թոռմեր էր, չորցեր։

ՄՈՒՇ. տարուած։ Ա՞յն ատեն... այն ատեն, երբ... երբ ես... ընդհատելով։ Ուրեմն իմ զգացումներս ինձի չէին խաբած, ուրեմն դուք լուրջ...

ԱՁՆ. դառն հեգնութեամբ։ Լո՞ւրջ...

ՄՈՒՇ. Եւ ոչի՛նչ չըսիք։

ԱՁՆ. Ի՞նչ պիտի ըսէի։

ՄՈՒՇ. Ոչ իսկ չնչին ցոյց մը։ Գուցէ...

ԱՁՆ. սթափելով, ապշած։ Բայց ինչո՞ւ այս բոլորի մասին խօսեցա ձեզի։

ՄՈՒՇ. ծանր քայլով կ'երթա կը յենուի պատին ու մտամոլոր խօսուածքով։ Ուրեմն եղեր է մէ՛կը աշխարհիս երեսին, ուրեմն եղեր է մէ՛կը։ Ուրեմն կը սիրէի՞ք ինձի, հա՞, կը սիրէի՞ք առանց ոչինչ յայտնելու, առանց ինձմէ որևէ շահ, որևէ փոխարինութիւն սպասելու. տարօրինակ է, հաւատալն անդամ տարօրինակ է. քիչ լուռ։ Իսկ վերջը։

ԱՁՆ. Ինչպէ՞ս։

ՄՈՒՇ. Բայց վերջը ինձի տուեցիք, իհարկէ, մանաւանդ այս վերջին տարին։

ԱՁՆ. պարզ։ Ինչո՞ւ։

ՄՈՒՇ. քմծիծաղ։ Անշուշտ ձեզի՛ ալ են պատմեր, թէ ես ի՞նչ մարդ եմ։

ԱՁՆ. Ձեր մասին շատ բաներ կը խօսին, ճի՛շտ է, և մէկը միւսէն աւելի դէշ։ Բայց ես... ես միշտ խորհեր եմ, որ ուրիշի հոգին հասկընալը շատ դժուար բան է, մանաւանդ խոր ու յամառ մարդոց։ Ես գիտեմ, որ դուք ուրիշներուն շատ կարևորութիւն տուողներէն չէք, իսկ այդ տեսակ մարդիկը հասարակութենէն չեն սիրուիր։

ՄՈՒՇ. զարմացած, յափշտակուած։ Ո՞վ ըսաւ ձեզի այդ բոլորը։

ԱԶՆ. Եւ վերջապէս կան շատ ծախորդ կեանքի պարագաներ, երբ ստիպուած ենք այն տեսակ բան մը ընելու, որու համար մենք չէինք ստեղծուած։

ՄՈՒՇ. վայրի ու բուռն ծիծաղ ու քիչ հանդարտած։ Ա՜հ, ի՜նչ ապուշ է կեանքը։ Մենք մեր բաղդը ուր ըսես կը փնտռենք, ու չենք նայիր միայն մեր ձեռքին տակը, ուր անիկա դրած է. իսկ երբ ահա՜ կը տեսնենք՝ արդէն ուշ է։ Ի՞նչ կ'ըլլար, որ այս խօսակցութիւնը մենք եօթը տարի առաջ ունենայինք։ Ո՞վ գիտէ, գուցէ բոլորովին ուրի՛շ, այլ կը դառնար աշխարհը մեզի համար։

ԱԶՆ. երակոտ։ Եօ՞թը տարի առաջ, այո՛, եօթը տարի առաջ... սթափելով։ Բայց, է՜, խօսինք միայն եղբօրս մասին։ Թողէ՛ք, խնդրեմ, թողէ՛ք այդ բոլորը։

ՄՈՒՇ. ողևորուած։ Ինչո՞ւ, ինչո՞ւ թողնեմ. երբէ՛ք։ Ա՜յ, եթէ դուն ուզենաս... լսէ՛. դուն այդքան քաջ ես եղեր ու անկախ՝ բոլոր հասարակութեան կարծիքին հակառակը դատելու, միթէ չե՞ս կարող, միթէ չե՞ս ուզեր այդ ճամբովը շարունակես։ Եկո՛ւր, արհամարէ՛ բոլոր մեզի շրջապատողները, բոլոր մեր հակառակորդները, և դեռ ճի՛շտ ատոնք աւելի կատղեցնելու համար, տո՛ւր ձեռքդ ինծի. և մենք ձեռք ձեռքի...

ԱԶՆ. Թուլցած։ Թողէ՛ք, թողէ՛ք. ալ անցած է այս խօսակցութեան ժամանակը։

ՄՈՒՇ. Ինչո՞ւ։ Բաղդը բռնելը ուշ չէ երբէք. եթէ իրա՛ւ որ ինծի կը սիրես։

ԱԶՆ. դէմքը գոցելով։ Ա՜խ, Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ։

ՄՈՒՇ. յաղթական։ Կը սիրե՛ս, չէ՞, կը սիրե՛ս։ Ալ ի՞նչ ուրեմն. թքեր ենք բոլոր ապուշներուն ալ վրան, խելօքներուն ալ, անոնց բսածին ալ ու իրենց գաղղութիւններուն ալ վրան։ Բաւական է մե՛նք բաղդաւոր ըլլանք, բաւական է զոհ ըլլանք մենք մեզմով։ Ալ ի՞նչ տակէ անդին։ Տո՛ւր, Աղնի՛ւ, տո՛ւր ձեռքդ ինծի. տո՛ւր համարձակ. զո՛ւրկ պինդ ապտակ մը այդ միմոս հասարակութեան երեսին. և հաւատա՛, քեզի կ'երկրպագեմ ես, ասուածուհի՛ մը պէս, թևերուս վրա կը պտցնեմ քեզի։ Կը սիրե՛մ, կը դղե՛մ, կը փարիմ քեզի, կեանքիս պէս։ Նայէ՛ ես քառասունի մօտիկ մարդ եմ. սիրահարած պատանիի մը խօսքերը չէ՛, որ կը լսես։

ԱԶՆ. վախով։ Թողէ՛ք, թողէ՛ք, հողինիդ սիրէք։ Խօսի՛նք եղբօրս մասին. եղբայրս բանդն է։

ՄՈՒՇ. զրգուած։ Ա՜, «եղբայր», «եղբայր» երկու խօսքէն մէկը. ՀՐ ու կորուկ։ Քու եղբայրդ իմ թշնամիս է. վերջացա՛ւ. ուրեմն և քու թշնամիդ, եթէ իրաւ որ ինծի կը սիրես։ Այս վայրկեանէս սկսած ալ ոչի՛նչ գոյութիւն պիտի չունենա քեզի համար. տո՛ւն, տե՛ղ, ազգ, ազգակա՛ն, ոչի՛նչ, ոչի՛նչ։ Ե՛ս, միայն ե՛ս։ Իսկ ինծի համար ալ միայն դո՛ւն։ Կ'ուզե՞ս, կ'ուզե՞ս ինծի՛ հետ, միայն ինծի հետ, հիմա՛, հոս, անմի՛ջապէս, բոլոր իմ թշնամիներուս հակառակ, բոլոր աշխարհի դիմաց. եթէ իրա՛ւ որ ինծի կը սիրես։ Հա՞, կ'ուզե՞ս, կը սիրե՞ս։

ԱԶՆ. շշար, վախով։ Մենք... մենք իրար չենք հասկնար։ Ես... չգիտեմ ի՞նչ կը խօսիք։ Ես եկա միայն խնդրելու, որ դուք... լացուկամած։ Ա՜խ, ի՞նչ շահ ունիք դուք, եթէ կեանքս վերջնականապէս խորտակէք։

ՄՈՒՇ. սառն ու ծաղրով։ Այդ ո՞ր չափ զբաղուած էք դուք ձե՛ր կեանքի խորտակումովը. և միայն ձեր կեանքի. իհարկէ քո՛ւ ու եղբո՛ր։ Իսկ ե՞ս. ծիծաղ։ Ա՜հ, ի՞նչ փոյթ, քեզի՞ ինչ իմ կեանքս։ Ահա՜ քու բոլոր սէրդ, ահա՜ ձեր բոլորի սէրը։ Սպերախտնե՛ր, շողոքորթնե՛ր. չե՛մ ուզեր, չէ՛. ինծի պէ՛տք չէ ձեր սէրը. ո՛չ ձեր սէրը, ո՛չ ձեր համակրանքը. ինծի պէտք չէ ո՛չ ոքի սէրը։ Գնա՛, գնա՛, ի՞նչ դորձ ունիս հոս, գնա՛ եղբօրդ եռևէն. ինչո՞ւ ես եկեր ինծի, ի՞նչ կը սպասես ինծմէ. հեգնելով, որ քու կեանքդ չի խորտակի՞մ, հա՞. խնայե՛մ եղբայրդ, հա՞, որ վաղը երկնէ գնդակ մը ղրկել տա կուրծքս, ու միասին նստիք ու խնդաք ապուշութեանս վրա։ Սակայն այդ անմիտները պզտիկ բան մը մոռցեր են. մոռցե՛ր են, որ ես դեռ մեռած չեմ։ Գնա՛, գնա՛ ըսէ՛ այդ քու եղբօրդ ու այդ քու եղբօրդ եղբայրներուն, որ ես գիտեմ ինչպէս պէտք է հղմել պատերուն տակէն սողացող օձերուն գլուխը։ Գնա՛, գնա՛ ըսէ, որ ինծի զարնելը այնպէս գիւրին գործ չէ. դեռ իմ վրաս ձեռք բարձրացնողը չէ ծներ։ Լսեցի՞ր. դէ՞, գնա՛ հիմա. գնա՛ ու նստեցէ՛ք սիրեցէ՛ք իրար։ Իսկ ես թքե՛ր եմ ձեր վրա, ձե՛ր ու ձեր սիրո՛ւն վրա. ուժով մը կը բանա կից սենեակին դուռը։ Դէ՞, Արմենակ։ Քալէ՛. քալէ՛ երթանք, ես պատրաստ եմ, ես մաքրեցի՛ հաշիւներս. կը մտնէ ներս, դուռը եռևէն ամուր գոցելով։

*

Գ. ՏԵՍԱՐԱՆ

Աղնիւ, որ վերջի խօսքերու միջոցին բարձրացեր էր իր տեղէն ու սարսափած քարացեր, բոլորովին ուժասպառ կ'ինկնա նորէն բազմոցին վրա։ Ներս կը վազէ Արաքսի, մայրն ալ եռևէն։

ԱՐԱՔ. Ո՞ւր է, ո՞ւր է. Աղնիւը տեսնելով՝ վրան կը նետուի։ Իրա՞ւ է, իրա՞ւ է, որ Սեղրակը... կ'ուզէ գրկէ։

Ա.ԶՆ. վեր կենալով։ Մի՛, մի՛, ձեռք մի՛ տար ինծի։

Ա.ՐԱՔ. Մ՞խ, հոգ մի՛ ընէք. ոչինչ չկա. անշուշտ սխալմունք մը կա մէջը։ Ես արդէն մօրեղբօրս խնդրեցի. ես նորէն կը խնդրե՛մ. անիկա ճար մը կ՚ընէ։

Ա.ԶՆ. յոգնած։ Զգիտեմ, ճշմարիտ, ալ ի՞նչ կարիք կա այդ բոլոր կեղծ ու շինծու ձևերուն։

Ա.ՑՐԻ. խեթ։ Ի՞նչ...

Ա.ՐԱՔ. Ինչպէ՞ս թէ։

Ա.ԶՆ. Է՜, ալ ինչո՞ւ կը ծածկէք. աւելորդ չէ՞։ Չէ՞ որ արդէն հասաք ձեր նպատակին. եղբայրս արդէն բանդն է։

Ա.ՑՐԻ. կուան։ Ինչէ՞ր կու տա լեզուին։ Եղբայրդ բանդն են դրեր, մեղադրէ՝ եղբայրդ. մեղի՞ ինչու կը բամբասես. մե՞նք ինչացու ենք հոգ։

Ա.ԶՆ. Դո՛ւք... դո՛ւք։ Է՜, ես ոչինչ չունիմ ձեզի հետ։ Բայց վախցէ՛ք, վախցէ՛ք երկինքէն. ամէ՛ն բանի պատիժը կու դա։

Ա.ՑՐԻ. Ա՛ս աղչկան խելքին է եկեր։

Ա.ՐԱՔ. Ա՛զնի՛ւ, հոգի՛ս, հաւատա՛, որ հոգիիդ մեղք կ՚ընես. ես չգիտեմ անգամ թէ ինչ կ՚ըսես։

Ա.ԶՆ. Զգիտե՞ս, հա՞. ոչի՛նչ չգիտես։ Զգիտե՞ս նաև թէ եղբայրս մատնողը ո՞վ է, հա՞. չգիտե՞ս որ քեզի՛ է։

Ա.ՐԱՔ. վախցած, պլպլած։ Քեզի՞ս... ի՞մ...

Ա.ԶՆ. Հապա՛, հապա՛, քո՛ւ, քո՛ւ... կը փղձկի. բայց յանկարծ կը սրբէ աչքերը ու ձեռքը թափ տալով։ Է՜... Դուրս։

*

Ա.ՐԱՔ. Ա՛զնի՛ւ, Ա՛զնի՛ւ. կ՚ուզէ նեռի անոր հետէն, մայրը կը կենա դռան առջևը ու չի թողներ։ Մայր ու աղջիկ պահ մը դէմ դէմի. լուռ. վերջը բոլորովին բեկուած։ Մա՛յր, իրա՞ւ է։

Ա.ՑՐԻ. Ի՞նչը։

Ա.ՐԱՔ. Իրա՞ւ է, որ մօրեղբայրս... ու չի շարունակեր։

Ա.ՑՐԻ. Մ՞խ, ան խելառը ըսաւ, դուն ալ հաւատացիր։ Ի՞նչ գործ ունի Մուշեղը անոր եղբօրը հետ։

Ա.ՐԱՔ. Մա՛յր, մա՛յր, շիտակ ըսէ. եթէ ինծի կը սիրես, մայր... լալով կ՚ինայա մօրը կուրծքը։

Ա.ՑՐԻ. ինքն ալ յուզած. շշելով։ Ես ի՞նչ գիտնամ, աղջի՛կս. հանգստացի՛ր. ես ալ չգիտեմ. երևի տակը բան մը ըլլալու է. անշուշտ Սեդրակը բաներ մը ըրած ըլլալու է։ Մի՛ լար, զաւակս, մի՛ լար։ Մեզի՞ ինչ. երիկ մարդու գործեր են. քեզի՞ ինչ. մի՛ լար, աղջի՛կս, մի՛ լար. բան չկա։

Ա.ՐԱՔ. Բան չկա՞. մօրը գրկէն խլելով։ Բան չկա՞, երբ Սեդրակը բռներ են ու նետեր են բանտը. և ի՛մ մօրեղբայրս, ի՛մ... յանկարծ։ Բայց ասոր վերջը պէ՛ղ է, մայրի՛կ. ասոր վերջը....

Փողոցէն կը լսի ատրճանակի պայթիւն։

Ա.ՑՐԻ. դող ելած։ Սա ի՞նչ էր. պայթիւնը կը կրկնուի։ Ցիսուս Քրիստոս. ի՞նչ բան է ասիկա։ Զըլլա թէ նորէն մարդ զարկին։ Մուշեղը դեռ դուրս չելաւ, չէ՞։ Նե՞րսն է, չէ՞։ Մուշեղը դեռ տունէն չելա՞ւ, չէ՞. կը վազէ կից սենեակը։

Արաքսի իր տեղը կեցած է արձանացած, ականջ դնելու սպասողական դիրքով. սարսափած։ Դուրսը փողոցէն կը լսի խուլ աղմուկ մը պատուհաններուն տակ։

Ա.ՑՐԻ. ահապարանքով կը վազէ նորէն ներս ու դէպի պատուհանը։ Ցած նայելուն պէս՝ վայրի ճիչ մը կ՚արձակէ, ու խենթի պէս կը նետուի միւս կողմի դռնէն դուրս։ Մուշե՛ղ, Մուշե՛ղ...

*

Ա.ՐՄ. միաժամանակ ներս կը վազէ հակառակ դռնէն. առանց ֆէսի, շալ, սարսափած։ Տիկի՛ն, տիկի՛ն...

Ա.ՐԱՔ. կ՚երթա դէմը ու ամբողջ հասակովը ուղղուած՝ հրամայական խուլ խեղդուած ձայնով մը։ Ի՞նչ եղաւ. ըսէ՛ք։

Ա.ՐՄ. դողալով։ Օրիորդ...

Ա.ՐԱՔ. ակռաներն ու բռունցքները սեղմած։ Ըսէ՛ք, ըսէ՛ք։

Ա.ՐՄ. ընդհատ, դողդոջ, սոսկումէ։ Հո՛ն, հո՛ն, մեր փողոցին անկիւնը... զընդակը, ֆրշ, ականջիս տակէն։ Իսկ միւսը... այնպէս, աւելի բարձր հասակով, մօրուքը սե՛փ սև, ուղի՛ղ էֆէնդիին վրա։ Ո՜ւհ, հ՜ուհ... ձեռքով աչքերը կը փակէ։ Շիտակ ճակտին մէջտեղը... իսկոյն վար ինկաւ, իսկոյն։ Ո՜ւհ, հ՜ուհ, Աստուած իմ.

Ա.ՐԱՔ. խեղդած ձայնով, աչքերը յառած օդի մէջ, ձեռքերը կը պարզէ կամաց դէպի վեր, երկիւղած։ Ա՛զնի՛ւ... Ա՛զնի՛ւ...

Այդ միջոցին դուրսը աղմուկը սաստկացած է։ Վերջի խօսքերուն դուռները կը բացուին թափով. քանի մը մարդիկ կը մտնեն ներս, ետ-ետ, բան մը ներս բերելու զգուշութիւններով։ Բառեր, խօսքեր, հրամաններ։ Արաքսի տեսածին պէս՝ թեթև ճիչ մը կ՚արձակէ և ուշաթափ կը փուի գետին։ Այս բոլորը միասին, կարճ ու արագ։

Լ. ՇԱՆԹ

1901, Թիֆլիս

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Հ.Հ. Публичная Библиотека
7/XI—1922
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

319

ՀՀ Ազգային գրադարան
NL0358811

ԳԻՆՆ Է 60 ԿՈՊ.
ՈՒՂԵԾԱԽՍՈՎ 75 „

Дозволено цензурою. С.-Петербургъ, 31 Августа 1904 года.

980142

47356

891.99
Ч-30